

27-28(602-603)

30.12.2020

Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել գիմաստությունն եւ գլխավոր, իմանալ զբանս հանճարոյ

ԼՍՏԱՐԱՐ

Лусарар ●

ԿՐԹԱԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ

● Lusarar

ԵՐԲ ՈՒՆԱԿ ԵՆՔ ՃԱՎԻ ՄԻՋԻՑ ԺՊՏԱԼ

Ավարտին է մոտենում 2020-ը: Անցյալ տարեվերջին մենք այս թվային սիմետրիային մոզական նշանակություն էինք տալիս՝ ակնկալելով, որ այն հաջողություններ կբերի հայոց աշխարհին ու ամեն մի հայի ընտանիքին: Ավա՞ղ, տարին նահանջ էր, ու նվաճումների մեր բնագծերից սրընթաց նահանջ եղավ դեպի հայրենագրվում, ցավալի մարդկային կորուստներ...

Աչքիդ առաջ ոչնչանում էր սրբությունդ, ու դու ոչինչ չէիր կարող անել, խլում էին տասնամյակների ազնիվ վաստակդ, և անգոր էիր դրա դեմն առնելու: Ամենահավորը՝ ոսոխին դեմ-հանդիման կանգնած զինվորիդ հրամայված էր չկռվել... Որակումը քաղաքագետի, միջազգայնագետի գործն է, բայց մանկավարժը դա ինչպե՞ս բացատրի հայրակորույս իր սանին, դասախոսն ի՞նչ համոզիչ մեկնաբանություն տա ուսանողի համառ հայացքին:

1915-ից հետո սա երկի համազգային ամենամեծ շոկն է, որ ապրում է հայ ժողովուրդը: Անգամ 88-ի դեկտեմբերյան երկրաշարժը, որ բազմակի ավելի գոհերի ու ավերածությունների հանգեցրեց, բարոյահոգեբանական այսպիսի անկման չհասցրեց ազգին, որովհետև երկրաշարժը բնական աղետ է: Իսկ ներկա դեպքում մարդկային գործոնն է դարձել հանկարծահաս ողբերգությունների պատճառ:

Անշուշտ, հայ ժողովուրդն իր բազմադարյա կենսուղին անցել է բազում դժվարություններ հաղթահարելով, անթիվ զրկանքներ կրելով: Բայց եղել են նաև հաղթանակներ, որոնց շնորհիվ կարողացել է կրկին վեր հասնել մոխիրներից: Արցախյան առաջին պատերազմում տարած հաղթանակն ապացուցել է, որ կարելի է դիմագրավել ցանկացած ուժի, եթե միասնական ես: Գուցե ինչ-որ մի փուլում այդ միասնականությունը խախտվել էր, որի պատճառով էլ մեր նվաճումների բնագծերից ցավալի նահանջ եղավ: Անցյալից անհրաժեշտ դասեր քաղելով՝ լավատեսորեն նայենք ապագային. մի՞թե մենք այն հերոսական սերունդը չենք, որը կարողացավ հայի մեջ վերականգնել սեփական ուժերի հանդեպ հավատը: Այո, հիմա տարածքով փոքրացել է Արցախը, մենք անարդար պատերազմում հերոս զավակներ ենք կորցրել, բայց մենք դեռ կանք: Կա՞ Արցախը՝ վիրավոր, բզկտված, սակայն իր խորունկ ցավի մեջ՝ հպարտ: Մեր հոգատարությամբ փայփայենք բոլոր նրանց, ովքեր պատական օջախներ են կորցրել, ում տան լույսն է մարել ու ջրաղացը՝ ջրատվել: Հավաքվենք, միանանք, զորանանք ու շարունակենք պայքարել:

Ոչ լրիվ երկու ամիս է անցել նոյեմբերինյան, այսպես կոչված, զինադադարից, սակայն այդ կարծ ժամանակում հասցրել ենք ինչ-որ չափով շտկել մեր ճկված մեջքը: Նորից շինարարական հեք կա Արցախում, մարդիկ սկսել են ցավի միջից ժպտալ, և ամենակարևորը՝ դպրոցաշենքերում կրկին դպրոցական զանգն է բարձր հնչում:

Նոր իրականությունը նոր մարտահրավերներ է առաջադրում, և ինչքան էլ դժվար լինի՝ պարտավոր ենք դրանք հաղթահարել. մենք այլընտրանք չունենք: Բոլոր ցավերն ու անհաջողությունները թողնենք չարաբաստիկ 2020-ում ու երրորդ հազարամյակի երրորդ տասնամյակ մտնենք նոր հույսերով ու ծրագրերով:

Աստված բոլորիս պահապան:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

Ուսուցիչի ՊՍԿԱՆՅԱԼ

ԵՐՆԵՎ, ԹԵ ԱՅՍ ՆՈՐ ՏԱՐԻՆ

Երնե՛վ, թե այս Նոր տարին
Վերջ տար հայի ցավերուն.
Չարը կորչեր, ու բարին
Բուն ղըներ մեր սըրտերուն:

Երնե՛վ, թե այս Նոր տարին
Ազատ շընչեր Հայաստան,
Եվ շուրջ Մասիս մեր սարին
Փայլեին արտ-անդաստան:

Երնե՛վ, թե այս Նոր տարին
Ոտքի կանգներ Հայաստան,
Եվ կիսաքանդ մեր Կարին
Լիներ քաղաք մեր ոստան:

Երնե՛վ, թե այս Նոր տարին
Հայ սըրտի մեջ ուժ հոսեր,
Ապավինած յուր սըրին,
Հայը քյուրդեն չի սարսեր:

Երնե՛վ, թե այս Նոր տարին
Հայ ազգ ի մի գունարվեր,
Ի գլուխ Կարնո հայ ամրին,
Հայի դրոշակ ծածաներ:

Հայե՛ր, երբեք չերկնըտենք,
Կըկատարվի այդ ամեն,
Եթե իսպառ մենք հանենք
Փոքրոգություն մեր սըրտեն:

ՄԵՆՔ ՊԵՏՔ Է ՊԱՏԿՈՎ ԴՈՒՐՍ ԳԱՆՔ ԱՍԵՂԾՎԱԾ ՎԻՃԱԿԻՑ

Դեկտեմբերի 24-ին ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Լուսինե Ղարախանյանի մոտ տեղի ունեցավ աշխատանքային խորհրդակցություն, որին մասնակցում էին նախարարության աշխատակազմի, կրթության շրջանային բաժինների ղեկավարներ, «Դասավանդիր, Հայաստան» Արցախի տարածաշրջանային ծրագրերի տնօրենը:

Օրակարգում ընթացիկ և առաջիկա աշխատանքների հարցերն էին: Խորհրդակցությունը ետպատերազմ-

տեսել արդիականացման որոշ քայլեր կրթության համակարգում: Խոսքը տեխնոպարկերի և «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների ցանցի մասին է: Դա ամրագրված էր Արցախի կրթության ռազմավարական ծրագրում, բայց որոշակի փոփոխություններ նորից նախատեսվում են: Լ. Ղարախանյանը տեղեկացրեց, որ երկու մեծ տեխնոպարկ է հիմնվելու. մեկը Մարտունու շրջանում, մյուսը՝ Ստեփանակերտում. «Մենք ոչ թե հումանիտարն անտեսելու ենք, այլ ճիշտ ձևով այն պետք է համադրենք բնագիտության հետ

ներին իրենց կրթօջախներում ընդունելու կրթօջախների բարյացակամությունը, ինչպես նաև ուսուցիչներին: «Դա պետք է արվի բարոյական ըմբռնման բարձր մակարդակով», - շեշտեց գերատեսչության ղեկավարը:

Բարոյականության մեկ այլ հարթակ է ռուս խաղաղապահների հետ փոխշփումը: Այն պետք է կառուցված լինի մեր ազգային արժանապատվության հիմքի վրա: Դպրոցում պետք է ամեն երկուշաբթի և՛ Արցախի հիմնը հնչի, և՛ ամեն տեղ ծածանվի մեր պետական դրոշը: «Մենք



յան իր խոհերով բացեց նախարար Լ. Ղարախանյանը:

- Այսօրվա դրությամբ մեր 24000 դպրոցականներից 15600-ը Արցախում են: Մենք իսկապես մարդկային, նյութական և բարոյական ծանր կորուստներ ենք կրել: Բարոյական վնասը ծանր է այն առումով, որ կրթական համակարգը դժվարանալու է սերնդի աչքերին ուղիղ նայել. մասսայական արժեզրկման գործընթաց է սկսվել: Բայց ազգային ինքնակազմակերպվածության կարող ենք հասնել էլի դպրոցում՝ բնականոն մեր ճիշտ գործունեությանն անցնելով,- ասաց նախարարը:

Նա իր շնորհակալությունը հայտնեց Հայաստանի կրթության բաժիններին, դպրոցների տնօրեններին՝ պատերազմի ժամանակ և հիմա էլ Արցախի երեխաներին իրենց կրթօջախներում կրթելու համար: Միևնույն ժամանակ փոխանցեց հայաստանյան, մասնավորապես, «Ամանիա Շիրակացի» ճեմարանի, «Գլոբալ բրիջ» կրթահամալիրի, «Քվանտ», Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ և այլ դպրոցների տնօրենների շնորհակալությունը արցախցի աշակերտների ցուցաբերած ինտելեկտուալ բարձր կարողությունների և ինքնակազմակերպվածության համար: Պատերազմն ստիպեց նոր սրբագրումներ անել համակարգի ռազմավարության մեջ՝ այն դարձնելու համահունչ աշխարհի մարտահրավերներին: «Այն կառուցելու ենք, որքան էլ դա անընդունելի ձևակերպում լինի, ուժի կոնցեպտի մեջ», - ասաց Լ. Ղարախանյանը:

Նա տեղեկացրեց, որ նախարարությունն արդեն սեպտեմբերին էր նախա-

և բացառապես ծառայեցնենք մեր ներքին ու արտաքին մարտահավերժների դիմագրավմանը»:

Նոր տարվա բյուջեում նախատեսել են «Ամանիա Շիրակացի» ճեմարանի բնագիտական հոսքի համար 6-8 տեղ, որով բնագիտական ցիկլի արցախցի լավագույն սովորողները կարող են ուսում ստանալ այնտեղ: Իսկ տեխնոպարկի ծրագիրը կազմված է այնպես, որ ծրագրի շահառուները մնալու են Արցախում: Նրանք լինելու են մարդիկ, որոնք ստեղծելու են ժամանակակից տեխնոլոգիաներով ռազմամթերք:

Համակարգն իսկապես աշխատում է շատ ծանր պայմաններում: Գրեթե 1915թ. իրադարձությունների կրկնությունն է, համոզված է Լ. Ղարախանյանը. «Ես չգիտեմ մերոնք իրենց ինչպես են պահել 1915 թվականից հետո, բայց ես գիտեմ մի բան. կրթության համակարգը շատ զգայուն է, և զգայունության արձագանքն արտացոլվում է նրա արդիականացման մեջ՝ ինչ զարգացումներ ենք ունենալու: Զգայունությունը և արդիականացումը փոխկապակցված են: Չնայած պետք է սսել, որ շատ հեռու չենք եղել արդիական կրթությունից: Համենայն դեպս, վիճակագրությունը այդ մասին որոշ բան սատն է»:

Խորհրդակցությանը նախարարն անդրադարձավ նաև բարոյական հարցերի: Մասնավորապես, թե ինչ ջերմությամբ են հայաստանյան կրթօջախները վերաբերվել արցախցիներին: Նա վստահություն հայտնեց, որ նույն մեխանիզմը կաշխատի նաև այստեղ՝ նկատի ունենալով իրենց բնակավայրերից զրկված երեխա-

շարունակում ենք գրել մեր պատմությունը, և այն արժանապատիվ ձևով պետք է գրվի, որովհետև մեր զոհված տղաները ընդգծված արժանապատվության զգացում են փոխանցել մեզ:

Ամեն ինչ պետք է արվի, որ մարդկանց հավատը նորից արթնանա ապագայի նկատմամբ և, իսկ դրանում մեծ է հենց իրենց՝ ուսուցիչների դերը», - համոզված է ԿԳՄՍ նախարարը:

Նա վստահեցրեց, որ դպրոցական շենքային պայմանների, գույքային և նյութատեխնիկական բազայի ոչ մի խնդիր չենք ունենա: «Մենք արդեն գտել ենք այնպիսի գործընկերներ, որոնց օժանդակությամբ այդ ամբողջ կորցրածը վերականգնելու ենք: Պարզապես պետք է շատ ողջամիտ ձևով փորձենք ռեաբիլիտացվել», - ասաց նա՝ տեղեկացնելով, որ հոգեբանների խմբեր պետք է գան և աշխատեն ինչպես փոքրերի, այնպես էլ մեծերի հետ, քանի որ շատ դեպքերում բացասական էմոցիաները մեծերն են փոխանցում փոքրերին: Աշխատանքներ կտարվեն մանկապարտեզների դաստիարակների հետ առանձին թրեմինգով: Դա լինելու է հունվարին և լինելու է շարունակական: «Այդպիսի աշխատանքներ տարվելու են, բայց շատ բան կախված է առաջին դեմքերից, որովհետև առաջին դեմքն է փոխանցում մեր վարքագիծը, պահվածքը: Մի խոսքով, «Էլի մեր համակարգի վզին է այդ ծանր բեռը, և մենք պետք է պատվով դուրս գանք, որովհետև ուրիշ տարբերակ չունենք», - ընդգծեց նախարարը:

Ս. ԽԱԶԱՏՐՅԱՆ

ԱՋԱԿԻՑՆԵՐ

«ԴԱՍԱՎԱՆՈՒՐ, ՀԱՅԱՍՏԱՆ»-Ը ՆՈՐ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ՈՒՆԻ



Խորհրդակցությանը ԿԳՄՍ նախարարն Արցախի կրթական համակարգին աջակցողների շարքում հպարտությամբ նշեց «Դասավանդիր, Հայաստան» կրթական հիմնադրամի առաքելությունը: Այն Արցախի կրթական համակարգի կողքին էր պատերազմի օրերին և շարունակում է մնալ: Հիմնադրամի արցախյան տարածաշրջանային տօրեն Արմեն ՅՈՎԻՆՆԻՍՅԱՆԸ ներկա էր խորհրդակցությանը և եկել էր նոր առաջարկություններով:

Մինչ առաջարկները ներկայացնելը Ա.Յովիննիսյանը հակիրճ անդրադարձավ նախկինում կատարածին: «Դասավանդիր, Հայաստան»-ը նորավարտ ուսանողներից ընտրում էր լավագույններին, նրանց վերապատրաստում, մանկավարժական հմտություններ տալիս, տարբեր մեթոդներ սովորեցնում, և ըստ ներկայացրած պահանջի տեղավորում որևէ գյուղում: Ցանկալին հեռավոր գյուղերն էին, որպեսզի օգտակարությունն ավելի բարձր լինի: Նրանց մեծ մասը Քաշաթաղի շրջանում էր տեղակայված: Մինչ պատերազմը հիմնադրամը 28 գործընկեր դպրոց ուներ Արցախում, դրանցից այսօր 10-ն է մնացել: Չարեքտար, Աղավճո, Բերձոր, Շուշիի շրջանի Մեծ շեն, Հին շեն (սրանց վիճակը դեռ անորոշ է): Ներկայում «Դասավանդիր»-ի ուսուցիչներ են աշխատում Ծմակահողում, Շահմասուրում, Բերդաշենում, Մաղավուզում, Ստեփանակերտի հ. 12 դպրոցում:

Պատերազմի ժամանակ, երբ երեխաները տեղահանվել և ապաստանել էին Հայաստանում, «Դասավանդիր»-ը հետաքրքրվել և զննարկել է նրանց հետքերով:

Դիլիջանում, Հրազդանում, որտեղ մեծ թվով արցախցի երեխաներ կային, իր մասնագետներին ուղարկել էր նրանց մոտ: Այդ մոբիլ ուսուցիչների համար հիմնադրամը տներ էր վարձակալել, ու նրանք իրենց աշխատանքն անում էին: «Դա մենք անվանել էինք արտակարգ դրության կրթություն», - ասաց Ա. Յովիննիսյանը: Այդ կրթության շրջանակում «Դասավանդիր»-ը շուրջ 500 երեխայի հետ աշխատել է: Դրան զուգահեռ 140 ընտանիքի, որտեղ 2-3 դպրոցահասակ երեխա կա, բաժանել է պլանշետներ: Մի խոսքով, այդ ընթացքում ընդհանուր շուրջ 1000 հոգու հետ աշխատել է: «Մենք փորձել ենք ադապտացվել, ճկուն լինել և մեր օգտակարությունը շարունակել», - ասաց տնօրենը:

Արտակարգ կրթությունն իրենից ներկայացնում էր տնայցեր, սոցիալ-հուզական աջակցություն, ֆիզիկական ակտիվություն (խաղեր և այլն), առարկայական դասապատրաստում և այլն: Նպատակն էր սկզբում երեխաներին հանել սթրեսային վիճակից տնայցերի, սոցիալ-հուզական կրթության, խաղերի, ֆիզիկական ակտիվության միջոցով, այնուհետև կամաց-կամաց նրանց հասցնել իրենց առարկայական ծրագրին, հավասարեցնել մյուսներին:

Տարածաշրջանային տնօրենը խոսեց համընդհանուր մեթոդի կիրառման մասին, որը կոչվում է փոփոխությունների վրա հիմնված ուսումնառություն, և որի կապակցությամբ մինչ պատերազմը պատրաստվում էին հուշագրի կնքել ԿԳՄ նախարարության հետ: Դրա էությունը հետևյալն է. դասարանում ձևավորվում է 5-6 հոգանոց խումբ, որն ընտրում է մի մեծ գաղափար. ենթադրե՞ք կենսաբանությունն առարկայից՝ «Գլոբալ տաքացում»-ը: Եվ սկսում են հետազոտություններ անել, տարբեր հարցումներ անել ինտերնետով այլ դպրոցների մասնագետների հետ (պլանշետները հենց այդ նպատակով են տրվել աշակերտներին), թե ինչի հետևանք է գլոբալ տաքացումը, ինքը ինչով է նպաստում դրան, ինչով կարող է կանգնեցնել և ներկայացնում է առաջարկ: Այն համայնքային ծրագիր է դառնում, մի գաղափար, և սկսում են իրագործել:

Այդ առաջարկն ունի իր գնահատման գործիքները: «Դասավանդիր»-ն ունի գնահատող հանձնաժողով: Առաջարկի մեջ ներկայացվում է հավելված, որ ներառում է նաև բյուջե: Գնահատող հանձնաժողովը լավագույն առաջարկներն ընտրում է, և ֆինանսավորվում են: Նույն տիպի բան Շահմասուրում կար, որը համակարգիչներ էր առել և վերապատրաստման կենտրոն էր ուզում ստեղծել: Փառք Աստժո, գույքը պահպանվել է, գումարի մի մասն էլ կա: Ա. Յովիննիսյանն ասաց, որ նրանց հրահանգել է, որ շարունակեն այդ ծրագիրը: Ի դեպ, ովքեր հետաքրքրված են այդ առաջարկով, Ա.Յովիննիսյանն ասաց, որ կարող է պայմանների մասին փաթեթը նրանց էլեկտրոնային ուղարկել:

Ինչպես նշեցինք, «Դասավանդիր»-ը բաժանել է 140 պլանշետ և պատրաստվում է էլի բաժանել: Նախարարը ներկայացրել է այն աշակերտների ցուցակը, որոնց պատրաստվում են տալ: Մեծ շենի, Հին շենի և Լիսագորի դպրոցների բոլոր աշակերտներին համար նախատեսված են: Պլանշետները պետք է օգտագործվեն ինչպես օնլայն կրթության, այնպես էլ «Դասավանդիր»-ի նշած փոփոխությունների վրա հիմնված ուսումնառությունն իրականացնելու համար: Հունվարի վերջերին «Դասավանդիր»-ը նախատեսում է ևս 400 հատ պլանշետ նվիրաբերել նախարարությանը, և Ա. Յովիննիսյանը խնդրեց նախարարին ըստ հնարավորության բաժանել այն դպրոցներին, որոնցում կարող են դրանք օգտագործել տալ: Պլանշետները լինելու են արկղերի մեջ, և դրանց մեջ լինելու են նաև այդ ծրագրերի իրականացման համար գրեական պիտույքներ և այլն: Մեկ պլանշետ նախատեսված է վերը նշված խմբով՝ 5 հոգով օգտագործելու համար: Ու այդ 5 հոգու համար նաև նախատեսված են լինելու գրեական պիտույքները: Դրանց մեջ արդեն ներբեռնած են փոփոխությունների վրա հիմնված ուսումնառության նյութերը, այսինքն՝ եթե ինտերնետ էլ չլինի, աշակերտը կարող է օնլայն այդ ուսումնառությունն իրականացնել:

Նախկինում «Դասավանդիր»-ի ուսուցիչները դպրոցում հաստիք էին զբաղեցնում:

նում: Բայց հիմա, կապված տեղահանված ուսուցիչներին աշխատանքով բավարարելու հետ, Ա. Յովիննիսյանն ասաց, որ նրանց համար հաստիքներ չեն ուզում: Բայց քանի որ «Դասավանդիր»-ը կրթական հիմնադրամ է, և նրա կանոնադրությամբ հիմնադրամի շահառու կարող է լինել միայն ուսուցիչը, հարկ է լինելու, որ նա պայմանագիր կնքի դպրոցի հետ, որպեսզի նա ուսուցիչ կոչվի և հիմնադրամի շահառու հանդիսանա: Ա. Յովիննիսյանը խնդրեց նախարարին «Դասավանդիր»-ի մասնագետներին տեղավորել որ դպրոցում հնարավոր է՝ թեկուզ արտադասարանային խմբակներում աշխատանք տանելու ձևով, որպեսզի նրանք այդ պլանշետներն օգտագործել տան:

«Դասավանդիր»-ը նպատակ ունի այս ուսումնականում հիմնել բնագիտական կենտրոն և բնագիտական առարկաների գործընկերային ուսուցչական ողջ ենթակառուցվածքի դեպի այդ կենտրոնը: Ա. Յովիննիսյանն ասաց, որ ինչպես աշակերտներին, այնպես էլ տեղահանված ուսուցիչներին են ներգրավելու: Տեղեկացրեց, որ տվյալ պահին ունեն այդպիսի 13 ուսուցիչ, որոնք ներգրավված են արտակարգ դրության կրթության մեջ:

«Դասավանդիր»-ի Արցախում տեղակայված նախկին ուսուցիչներից 6-7 հոգի ցանկություն են հայտնել նորից այստեղ աշխատելու:

Բնագիտական կարևորելուն մի խթան է նաև «Դասավանդիր»-ի հետևյալ քայլը. հիմնադրամը պատրաստ է փոխառուցել ավարտական կուրսերի այն ուսանողների ուսման վարձը, ովքեր հետագայում կցանկանան աշխատել նրա ծրագրով:

«Դասավանդիր, Հայաստան»-ի տարածաշրջանային ղեկավարը հետագայում այսպես է պատկերացնում իրենց աշխատանքը: Ենթադրելով, որ ազատ տներ չեն լինի, որ իրենց մասնագետներին տեղավորեն, մտադիր են ընտրել 5 ռազմավարական վայրեր, որտեղ հնարավոր լինի տուն կառուցել, և քիչ թե շատ կենտրոնական լինեն մոտակա բնակավայրերի համար, իրենց միջոցներով պատրաստեն արագ կառուցվող տներ ու տրամադրեն մասնագետներին:

Ս. ՊԱՐԻԵՆՅԱՆ

ԹՈՂ 2021-Ը ՀՈՒՅՍՈՎ ՈՒ ԼՈՒՅՍՈՎ ԼՅՆԻ ՄԵՐ ՄՐՏԵՐԸ, ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԲԵՐԻ ԱՐՃԱՆ ԱՆԽԱՐՀԻՆ

Արցախում Նոր տարվա կապակցությամբ տոնական միջոցառումներ չանցկացվեցին: Ազգային ողբերգությունն ապրած ժողովրդի մտքով անգամ չանցավ մնալու բան: Նույնիսկ երեխաները, որոնց համար Նոր տարին ամենասպասված տոնն է, ամհամբեր չեն այդ հարցում: Բայց երեխան մնում է երեխա, և ամեն ինչ պետք է անել՝ նրանց դեմքից հեռացնելու տխրամածության քողը, ուրախություն պարզաբերելու նրանց: Չէ՛ որ մեր վաղվա օրը նրանց հետ ենք կապում, որ մեծամասն հոգով ու մարմնով առողջ, տեր կանգնեն մեր օջախներին, ասել է թե՛ հայրենիքին:

Հեռավոր և մոտիկ մեր հայրենակիցները, մեզ բարեկամ բարի կամքի տեր մարդիկ հոգացել են, որ Արցախի երեխաներին ժպիտ պարզեն, նրանց ուրախացնեն ամանորյա նվերներով: Ստեփանակերտի բոլոր դպրոցներում, շրջաններում բարեգործական տարբեր աղբյուրներով արցախցի երեխաներն Ամանորի կապակցությամբ նվերներ ստացան: Բնականաբար, առաջին պլանում տեղահանված բնակավայրերի երեխաներն էին:

Երևանի Սոս Սարգսյանի անվան Համազգային թատրոնը բերել էր «Սպիտակաձյունիկն ու յոթ թզուկները» ներկայացումը: Գաղափարը չարի դեմ բարու հաղթանակն է: Կյանքը շարունակվում է, և բարու ու արդարության հաղթանակին պետք է հավատալ: Երեխաները պետք է հավատան հրաշքների: Նրանք վրդովվում էին

բեմում չարի կատարած գործողություններից և իրենց բացակայություններով փորձում էին զերծ պահել բարուն չարի



որոգայթներից: Իսկ Ձմեռ պապի հայտնվելը հրճվանքով ընդունեցին: Նրանց ուրախությունը փոխանցվում էր դահլիճի վերջում նստած ծնողներին:

Կանադահայերը նույնպես նվերներ են պատրաստել արցախցի փոքրիկների համար: Ծրագիրը կյանքի է կոչվել Արցախի մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի աջակցությամբ:

Հայ բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) Փարիզի «Նուբար» մարզական խումբը՝ միության Եվրոպայի և Հայաստանում սփյուռքահայերի երիտասարդական ծրագրերի համակարգող տնօրեն Հերմինե Դյուլայանի, մարզական

խմբի պատասխանատու Սան Նաջարյանի ու խմբի անդամ երիտասարդների մասնակցությամբ, շուրջ 4000 նվերներ են բերել՝ Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատում կազմակերպվելու նաև թատերականացված միջոցառում երեխաների մասնակցությամբ: Փոքրիկները Ձմեռ պապի և Ձյունամուշկիկի հետ ուրախ գնացք կազմեցին, հանելուկների պատասխանեցին, բանաստեղծություններ արտասանեցին: Վերջում ստացան նվերներ՝ քաղցրավենիք, գրեական պիտույքներ, հագուստ: Խումբը շրջագայեց



Ման Մարտունիում, Մարտակերտում, Ասկերանում, մոտակա գյուղերում:

Իսկ Ստեփանակերտի հ. 3 դպրոցում

ռուս խաղաղապահները «Յունարմիա» համառուսական մանկապատանական հասարակական շարժման ներկայացուցիչների հետ անցկացրին ակցիան «Յունարմիա»-ն Ղարաբաղի երեխաների համար: Ակցիայի ընթացքում կայացավ հեռուստականուրջ դպրոցի և ՌԴ 10 քաղաքների միջև: Հեռուստականուրջի ժամանակ Կրասնոդարի երեխաները ԼՂ երեխաներին փոխանցեցին «Աշխարհի գրաֆիտի» էստաֆետը, որի ժամանակ մասնակիցները դպրոցի պատին նկարել են՝ խորհրդանշելով խաղաղությունն ամբողջ աշխարհում: Բացի այդ, Ռուսաստանից երեխաները տեսակոնֆերանսի միջոցով շնորհավորել են ղարաբաղցի երեխաներին՝ զալիք Ամանորի կապակցությամբ և փոխանցել նրանց իրենց ձեռքով պատրաստած 1,5 հազար բացիկներ ու 1,2 հազար ամանորյա խաղալիքներ, իսկ խաղաղապահները երեխաներին նվիրել են դպրոցական պարագաներ ու պայուսակ:

Արցախի փոքրիկները նվերներ են ստացել նաև ռուսաստանաբնակ մեր հայրենակիցների կողմից:

Բոլորի մաղթանքն է՝ թող 2021-ը հույսով ու լույսով լցնի մեր սրտերը, խաղաղություն բերի Արցախ աշխարհին:

Սեփ. լրատվություն

ԱՐԺԵՆԱՍԿԱՐԳ

ԵՎԵԼ Ե ՓԱՂԱՓԱՐՄԱՆ ՄԱՐԴԿԱՆՅ ԺԱՄԱՆԱԿԸ

Կարելի է ասել, որ կրթության ոլորտում ամեն ինչ պետք է սկսենք հիմքից: Նախորդ տարիների մեր կրթական քաղաքականությունը հիմնված է եղել այն թեզի վրա, որ արևմտյան կրթական համակարգը լավ է, և մենք պետք է ընդամենը ներկրենք այն՝ արագ սննդի և մնացած կապիտալիստական ինդուստրիաների նման:

Հիմա պարտավոր ենք հասկանալ, որ այդպես շարունակել չենք կարող: Մեր գլխավոր սխալներից մեկը եղել է այն, որ փորձել ենք պետականություն կառուցել առանց կրթությունը, գիտությունը, մշակույթը կարևորելու: Իհարկե, այդ ոլորտների մասին բարձրագույն ճանաչող շատ են ասվել, բայց բոլորիս համար էլ ակնհայտ է, որ այդ ոլորտներն իրականում եղել են լուսանցքում: Մինչդեռ եթե ուզում ես պետականություն ձևավորել, չես կարող առանց մշակույթի այդ խնդիրը լուծել: Հայաստանում մշակութային քաղաքականություն ասելով այս տարիներին հասկացել են գուժարների բաշխում թանկարաններից, պատկերասրահներին, արվեստի դպրոցներին, առանձին արվեստագետների ու նախագծերի: Կազմակերպվել են նաև ցուցահանդեսներ, փառատոներ, համերգներ և մշակութային այլ միջոցառումներ:

Մինչդեռ մշակութային քաղաքականություն՝ առաջին հերթին նշանակում է գիտական ուսում-

նասիրությունների հիման վրա մեր ժողովրդին, մեր իրականությանը, մեր տարածաշրջանին համապատասխան մշակույթի ձևավորում: Մշակույթը միայն արվեստ չէ, ոչ էլ, առավել ևս, արվեստագետների ֆինանսավորում: Նորաստեղծ պետության համար մշակույթը արժեքների, գաղափարների, մտածողության, հոգեբանության, վարքագծի ամբողջություն է: Մշակույթը «հասարակական սոսիմո է»: Այն ամենն է, որը մեզ հուշում է, որ կա անհատից ավելի բարձր տիրույթ: Մենք այս տարիներին ապրել ենք ծայրահեղ էգոիզմի միջավայրում: Մինչև 2018թ. այդ էգոիզմն արտահայտվել է նրանով, որ մեր հասարակության անդամները, պետությունից չստանալով աջակցություն, ամեն մեկն իր գլխի ճարն է տեսել: Ով «բաշարող» է եղել, շատ է վերցրել, ով չի «բաշարել», յուրաքանչյուրն էր և այլն:

Իսկ ո՞ր են հասարակություն, ինստիտուտներ, համակարգեր կառուցելու ջանքերը: Ատոմիզացված մարդիկ չեն կարող հասարակություն, առավել ևս՝ պետություն կառուցել: Այս առումից մանրամասն արդյունքն այն է, որ քննիչները, դատախազները, դատավորները, փաստաբանները

չեն հասցնում քննել հազարավոր գործերը, իսկ մշակույթի, գիտության, կրթության ոլորտներում դատարկություն է: Մանկավարժական բուհերում ավելանում է թափուր տեղերի թիվը, դպրոցները դժվարությամբ են գտնում նոր ուսուցիչներ, մշակութային մասնագիտությունները մոդայիկ չեն, երիտասարդները չեն ուզում զբաղվել գիտությամբ: Մենք ծախողել ենք հասարակություն, պետություն կառուցելու երեք գլխավոր սյուները՝ կրթություն, գիտություն, մշակույթ: Ու քանի որ ծախողել ենք, հիմա ունենք հանցագործությունների աճ, անհանդուրժողականության ու ատելության թունավոր մթնոլորտ, պառակտված, բզկտված հասարակություն: Արդյունքը ոստիկանների ու իրավապահների լարված աշխատանքն է: Այսօր մենք քաղում ենք մեր արածի ու չարածի պտուղները և պայքարում ենք հետևանքների դեմ:

Մի հետաքրքիր պատմություն կա: Երկու ընկեր մտած են գետի ափին: Հանկարծ նկատում են գետում խեղդվող երեխայի: Նետվում են գետը և փրկում երեխային: Այդ պահին նկատում են մեկ այլ խեղդվող երեխայի: Գետում շարունակաբար հայտնվում են նոր երեխաներ: Թե՛ս պահին ընկերներից մեկը գետից դուրս է գալիս: Մյուս ընկերոջ «Ո՞ր ես ինձ մեռակ թողնում, արի օգնիր» փրկենք այս երեխա-

ներին» հանդիմանանքին պատասխանում է, «Գնում եմ բռնեմ ափի մոտ կանգնած այն մարդուն, որն այս երեխաներին գցում է գետը»: Սա շատ լավ պատմություն է այն մասին, որ մենք պետք է պայքարենք ոչ թե հետևանքների, այլ պատճառների դեմ:

Իսկ պատճառների դեմ պայքարելու համար մեզ պետք է գաղափարական իշխանություն, որի առաջնահերթ խնդիրը հասարակություն ձևավորելն է: Այդ հասարակության անդամները ոչ թե պետք է մտածեն, որ իրենք են ամենակարևորն ու ճիշտը, այլ՝ որ կան իրենցից ավելի կարևոր բաներ, որ իրենք կարող են սխալ լինել: Առաջնահերթ պետք է ստեղծել գիտնականների խումբ, որի մեջ պետք է լինեն փիլիսոփաներ, մշակութաբաններ, մարդաբաններ, ազգագրագետներ, հոգեբաններ, սոցիոլոգներ: Այդ խումբը խորքային հետազոտությունների միջոցով պետք է ուսումնասիրի իրավիճակը և ներկայացնի առաջարկներ: Այդ առաջարկների առաջնությունն պետք է լինի այն գաղափարը, թե ինչպես պետք է մարդկանց դուրս բերենք ծայրահեղ եսակենտրոն վիճակից և դարձնենք անհատներ, որոնք կհասկանան նաև հասարակական միասնության, հասարակական խնդիրներ լուծելու անհրաժեշտությունը: Դրանից հետո կարելի է ստեղծել շատ ավելի լայն մասնագիտա-

կան ընդգրկում ունեցող խումբ, որն այդ հետազոտությունների հիման վրա դուրս կբերի պետության ռազմավարությունը: Այդ ամենն ունենալուց հետո կարելի է մտածել արդեն ոլորտային ռազմավարությունների մասին: Ընդ որում, կրթությունը, գիտությունը, մշակույթը պետք է ունենան առաջնահերթ կարևորություն: Այդ 3 ոլորտները ցանկացած պետության հենասյուներն են: Եթե չունեն նորմալ մշակույթ (չփոթել փառատոն կամ ցուցահանդես կազմակերպելու հետ), կրթություն և գիտություն, բոլոր տնտեսական, սոցիալական, ռազմական բարեփոխումները ծախողվելու են:

Մենք այլևս չենք կարող ունենալ այնպիսի իշխանություն, որը մտածում է միայն իր բարեկեցության մասին: Մենք այլևս չենք կարող ունենալ իշխանություն, որը հանուն այսրոպեական շահերի գաղութացնում է մեր երեխաների ապագան: Մեզ պետք է համակարգային մտածողություն ունեցող, գաղափարական իշխանություն, որը կարողանա կառուցել ինստիտուտներ, համակարգեր և ձևավորել հասարակություն: Մեր գերնպատակը պետք է լինի այն, որ ապագա սերունդները մեզ հիշեն որպես լավ նախնիներ:

Սերոբ ԽԱԶԱՏՐՅԱՆ
Կրթության փորձագետ

ԻՄ ԴԱՍՂԵԿԻ ԺԱՄԸ

Ահա թե ինչ ապրեցին Արցախի դպրոցականները 2020-2021 ուստարվա սկզբից դեռ մեկ ամիս չանցած:

Սեպտեմբերի 23-ին հերթական դասղեկի ժամն էր իմ դասղեկական 6-րդ «դ» դասարանում: Այն նվիրված էր Ստեփանակերտ քաղաքի օրվան: Մեր սիրելի մայրաքաղաքի մասին երեխաներն ուրախությամբ հանդես եկան՝ նշելով, որ այն շատ գեղեցիկ է, միշտ մաքուր, կանաչապատ: Նրանք արտասանեցին Ստեփանակերտին նվիրված բանաստեղծություններ, «Լուսայգ» թերթից ընթերցեցին քաղաքի տոմսին նվիրված հոդվածներ: Եվ ընդամենը երկու օրից պետք է նշվեր քաղաքի օրը: Աշակերտները մեծ խանդավառությամբ նույնիսկ պատրաստել էին գեղեցիկ պատի թերթ և կախել Փառքի սրահում, որը մինչ այսօր այնտեղ է: Այնպիսի՝ եռեռուցեք էր տիրում երեխաների մոտ, նրանք այնքա՛ն ուրախ էին...

Բայց ի՞նչ ասեմ, տեր Աստված, ո՞վ կպատկերացներ, որ 3 օրից սկսվելու է սարսափելի պատերազմը, և Արցախը հայտնվելու է Ադրբեջանի և Թուրքիայի ագրեսիայի ճիրաններում: Պատերազմը, որը տևեց 44 օր, ավերեց Արցախ աշխարհը, ունեցանք մեծաթիվ զոհեր, վիրավորներ, ինչպես նաև գերեզմաններ զինվորներ ու քաղաքացիներ: Իսկ պատերազմի ավարտին էլ պարզվեց, որ Արցախի տարածքի 75 տոկոսը հանձնվել է թուրքին:

Պատերազմն սկսվեց սեպտեմբերի 27-ի առավոտյան ժամը 7-ն անց 15-ին: Ամբողջ քաղաքը միանգամից հայտնվեց

ծխի ու փոշու ամպի մեջ: Ավերվեցին գյուղեր ու քաղաքներ, բազմաթիվ տներ ու բնակելի շենքեր, դպրոցներ, մանկապարտեզներ, հիվանդանոց ու հոսպիտալ, կենսական նշանակության օբյեկտներ ու խանութներ: Նույնիսկ տուժեց Շուշիի Ամենափրկիչ սուրբ Ղազանչեցոց եկեղեցին, որը վերջում խլեցին մեզմից:

Կարելի է ասել, որ նոյեմբերի 10-ին պատերազմն ավարտվեց: Նորից դպրոց ու դասեր: Նորից հերթական դասղեկի ժամ իմ 6-րդ «դ» դասարանում: Բոլորս մեկ ընդամենը մտադրվեցինք ներսն առնելու հիշատակին: Նահատակներ, որոնց կատարած անգնահատելի է, ու երբեք չեն մոռացվի նրանց կատարած սխրանքները: Նրանք ընկան հանուն Արցախի, հանուն Հայաստանի, հանուն հայ ազգի հարատևման:

Զգիտեմ ինչպես նկարագրել այդ դասղեկի ժամը: Նախ մեկ րոպե ձգվեց 5 րոպեից էլ ավել, լուռ կանգնել էինք. ոչ մի ձայն, ոչ մի խոսք, բոլորս անշարժացել էինք: Հագիվ զսպելով արցունքներս և կոկորդիս խեղդոց՝ ես փորձեցի ինչ-որ կերպ խախտել լռությունը, բայց չկարողացա:

Իբր ինքս էլ պատրաստվել էի եղածը, կատարվածը համառոտ ներկայացնելուց հետո ինձ տրամադրել, որ կարողանամ աշակերտներին հղել հայրենասիրական, ազգասիրական, համախմբվածության մասին իմ նկատառումները: Բայց ներսից մի ձայն ինձ կաշկանդում էր: Պատճառը

մեր պարտությունն էր, որը ես տեսնում էի սաներիս աչքերում: Իհարկե, ես կարողացա խախտել լռությունը՝ ասելով, որ մենք չենք պարտվել, ժողովուրդը չի պարտվել, որովհետև մեր տղաները, հատկապես՝ 18-20 տարեկանները, այս դժբախտ պատերազմում կատարեցին այնպիսի սխրանքներ, որոնց մասին դեռ երկար պիտի խոսենք ու փառաբանենք: Ինձ թվաց, որ երեխաներն ամեն ինչ հասկացան: Բայց դեռ լռում էին ու սպասում: Եվ ես շարունակեցի՝ ասելով, որ մեր հայ ազգը պարտվող չէ, նա միշտ հաղթող է, որ երբեք չպետք է թուլանա, այլ պետք է ավելի ու ավելի ուժեղանա և քայլի դարի հետ: Պետք է ունենալ ուժեղ բանակ՝ զինված ամենաժամանակակից զենք-զինամթերքով: Պետք է ունենալ ուժեղ թիկունք: Պետք է երկրում ստեղծել ազգային կուռ միասնություն ու անհանդուրժողականություն թերությունների նկատմամբ: Ես փորձում էի երեխաների մոտ ստեղծել նաև այն պատկերացումը, որ մեր հերոս տղաները միշտ մեզ հետ են և թեկուզ լուռ՝ մեզ հուշում են, որ հայրենիքը վեր է ամեն ինչից, նույնիսկ Աստծո տված պարգևից՝ կյանքից, և նրա պաշտպանության անհրաժեշտությունը միշտ կա: Ուստի պետք է լավ սովորել, լինել հայրենասեր ու ազգասեր: Հայրենիքի, հայրենի հողի համար մարտնչելը յուրաքանչյուր հայի պատվի գործն է:

Հետո նկատեցի, որ աշակերտները մի քիչ աշխուժացան և ուզում են ինչ-որ բաներ պատմել մեր հերոս տղաների մասին:

Եվ տղաներից մեկը պատմեց, որ իր եղբայրը ծանր վիրավորվել է ու դեռ լավ չի կազդուրվել: Աղջիկներից մեկը պատմեց, թե ինչպես է զոհվել իր քեռին: Իսկ երկու նորեկ երեխաները պատմեցին, որ իրենց տունը, ունեցվածքն ամբողջությամբ թողել են Շուշիում ու շատ են կարոտում իրենց տանն ու քաղաքին՝ ամեն անգամ հիշելով: Այդ ժամանակ աշակերտներից մեկը հարցրեց, թե ինչու Շուշին մերը չէ այլևս, ինչու են տվել թուրքին: Դե արի ու բացատրիր նրանց, թե ինչ է կատարվել, և իրոք, ինչու՞ Շուշին մերը չէ:

Իհարկե, աշակերտների մոտ երկի շատ հարցեր առաջացան, բայց ժամը մոտեցավ ավարտին: Ինձ թվում է, որ ամբողջ ուսումնական տարում մեր դասղեկական ժամերը նվիրված կլինեն այդ սարսափելի, դժբախտ պատերազմին:

Վերջում բոլոր երեխաներն ու ես միասին մեր բանակի զինծառայողներին մաղթեցինք առողջություն, խաղաղ ու անփորձանք, բարի ծառայություն:

Իսկ իմ խնդրանքն է՝ Տեր Աստված, թող այլևս մեր երեխաները պատերազմ չտեսնեն, չզրկվեն հողից, եղբորից, քեռուց, հորեղբորից... և ապրեն խաղաղ ու անմապերկնքի տակ:

Նարինե ԲԱԲՅԱՆ
Ստեփանակերտի Ա. Ղուլյանի անվան հ. 2 հիմնական դպրոցի ռուսաց լեզվի ուսուցչուհի 6-րդ «դ» դասարանի դասղեկ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐ Հ Ր Ա Մ Ա Ն

«16» նոյեմբերի 2020թ.

N 159/Մ

ք. Ստեփանակերտ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ, ՆԱԽԱԳՊՐՈՋԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱԳՊՐՈՋԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆԵՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության կրթության, գիտության և մշակույթի նախարարության կանոնադրության 9-րդ կետի դրույթներով և հաշվի առնելով 2020թ. նոյեմբերի 10-ին պատերազմական գործողությունների դադարեցումը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

Հանրակրթական ուսումնական հաստատություններում նոյեմբերի 17-ից վերսկսել ուսումնական պարապմունքները՝ հաստատությունների բնականոն գործունեության համար համապատասխան պայմաններ ապահովելու դեպքում:

Հանրակրթական դպրոցների և նախադպրոցական հաստատությունների տնօրեններին՝ ա) մինչև ուսումնական տարվա ավարտն ապահովել ուսումնական և առարկայական ծրագրերի կատարումը.

բ) կատարել ուսումնական և առարկայական ծրագրերի համապատասխան խտացումներ, գ) միավորային գնահատման կիսամյակային ամփոփիչ աշխատանքները փոխարինել տարեկան ամփոփիչ աշխատանքով, գործնական և թեմատիկ գրավոր աշխատանքների նվազագույն քանակները որոշել մեթոդիավորումների հայեցողությամբ,

դ) տեղահանված երեխաներին ընդգրկել համապատասխան դասարաններում և խմբերում, ե) ուսումնական հաստատություններում թափուր տեղ առաջանալու դեպքում մինչև սույն ուսումնական տարվա ավարտը առաջնահերթությունը տալ տեղահանված մասնագետներին՝ առանց նրանց վրա տարածելու մրցութային կարգի դրույթները:

Այս կրթության, գիտության և մշակույթի նախարարության աշխատակազմի կրթության պետական տեսչության տեսչներին՝ համապատասխան մեթոդական օգնություն ցուցաբերել դպրոցների ուսուցիչներին ուսումնական և առարկայական ծրագրերի խտացումների գործնական, թեմատիկ գրավոր աշխատանքների նվազագույն քանակների որոշման և ուսումնական ծրագրերի կատարման հարցերում:

Կրթության, գիտության և մշակույթի նախարարության աշխատակազմի ընդհանուր բաժնին՝ սույն հրամանը հասցնել Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերի ղեկավարներին և Ստեփանակերտի քաղաքապետարանին:

Հրամանի կատարման հսկողությունը վերապահել ԱԶ կրթության, գիտության և մշակույթի նախարարի տեղակալ Մ. Համբարձումյանին:

Լ. ՂԱՐԱԽԱՆՅԱՆ

ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՄՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ Հ Ր Ա Մ Ա Ն

«18» դեկտեմբերի 2020թ.

N 169/Ն

ք. Ստեփանակերտ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՅՆՈՂ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2020-2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Կրթության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրերի իրականացման հանրակրթական ուսումնական հաստատությունների 2020-2021 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները՝ համաձայն հավելվածի:

2. Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսական բաժնին՝ հանրակրթական ուսումնական հաստատությունների ֆինանսավորումն իրականացնել՝ հիմք ընդունելով սույն հրամանով հաստատված օրինակելի ուսումնական պլանները:

3. Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աշխատակազմի կրթության և գիտության վարչությանը և կրթության պետական տեսչությանը՝ ապահովել ուսումնական հաստատությունների գործունեությունը՝ օրինակելի ուսումնական պլանների պահանջներին համապատասխան:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Մ. Համբարձումյանին:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Լ. ՂԱՐԱԽԱՆՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության
կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2020 թվականի դեկտեմբերի 18-ի
N 169/Ն հրամանի

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐ
ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՅՆՈՂ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2020-2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ

1. ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՊԱՐՁԱԲԱՆՈՒՄՆԵՐ

Հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրերի իրականացման հանրակրթական ուսումնական հաստատության (այսուհետ՝ Հաստատություն) 2020-2021 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները (այսուհետ՝ Ուսումնական պլան), բացառությամբ 7-րդ և 8-րդ աղյուսակների, ունեն երկու՝ պետական և դպրոցական բաղադրիչ: Պետական և դպրոցական բաղադրիչները պարտադիր են և պետական ուսումնական հաստատություններում ֆինանսավորվում են պետական բյուջեից: Հաստատությունը Ուսումնական պլանի հիման վրա դպրոցական բաղադրիչով սահմանված ժամաքանակի տնօրինմամբ հաստատում է տվյալ ուսումնական տարվա իր ուսումնական պլան(ներ)ը:

1. Հաստատության Ուսումնական պլանը սահմանում է միջնակարգ կրթության բովանդակության կառուցվածքը, հանրակրթական ուսումնական առարկաներին հատկացվող շաբաթական ժամաքանակները՝ ըստ բաղադրիչների և հանրակրթական պետական ծրագրի նորմատիվային ծավալը (սովորողների շաբաթական ուսումնական բեռնվածության առավելագույն չափը)՝ ըստ դասարանների:

2. Պետական բաղադրիչով սահմանված ժամաքանակում փոփոխություն կարող է կատարվել միայն Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) համաձայնությամբ՝

1) արտակարգ ընդունակություններ ունեցող սովորողների ուսուցումն առավել բարենպաստ պայմաններում կազմակերպելու համար,

2) բազմահամակազմ կամ թերբեռնված դասարանների առկայության դեպքում,

3) Նախարարության կողմից տվյալ Հաստատության համար երաշխավորված այլընտրանքային ծրագրերով ու մեթոդներով ուսուցում իրականացնելու դեպքում:

3. Ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի տնօրինման կարգը սահմանված է՝

1) «Հաստատության ուսումնական պլանների ընդհանրական պարզաբանումներ»-ում,

2) օտար լեզվի ընտրությունը՝ «Օտար լեզվի ընտրության կարգ»-ում:

4. Ուսումնական պարապմունքները Հաստատությունում սկսվում են 2020 թվականի սեպտեմբերի 14-ին, ավարտվում 2021 թվականի հունիսի 12-ին՝ 6-օրյա աշխատանքային շաբաթվա դեպքում՝ ապահովելով առավելագույն 30 ուսումնական շաբաթ՝ առաջին, 32՝ երկրորդ և 34՝ երրորդից տասներկուերորդ դասարանների համար: Բոլոր պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսումնական շաբաթվա տևողությունը սահմանում է ուսումնական հաստատությունը՝ 15-օրյա ժամկետում համաձայնեցնելով Նախարարության հետ:

5. Ուսումնական հաստատություններում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը կազմակերպվում է «Հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրերի իրականացմանը հանրակրթական ուսումնական հաստատու-

թյան 2020-2021 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանների» հիման վրա՝ յուրաքանչյուր սովորողի համար, ըստ անհրաժեշտության կազմելով անհատական ուսուցման պլան (ԱՈՒՊ):

6. Ուսումնական պլանի պետական պարտադիր և դպրոցական բաղադրիչներն ուղղված են հանրակրթության պետական չափորոշչով, առարկայական չափորոշիչներով և ծրագրերով ամրագրված գիտելիքների, կարողությունների ու հմտությունների յուրաքանչյուր սահմանը:

7. Հաստատությունում (2-12-րդ դասարաններ) գործում է սովորողների գնահատման տասը միավորային սանդղակ:

8. Սովորողների ընթացիկ գնահատականների հիման վրա ձևավորվում են տարեկան գնահատականները՝ բացառությամբ սույն հավելվածի 9-րդ կետով նախատեսված դեպքի:

9. Առաջին դասարանում սովորողներին ընթացիկ և ամփոփիչ գնահատականներ չեն նշանակվում. ընթացիկ գնահատումը կատարվում է բնութագրման միջոցով: Տարեկան ամփոփիչ գնահատման նպատակով կազմվում է յուրաքանչյուր սովորողի կրթական զարգացման բնութագիրը:

10. Հաստատությունում խմբային ուսուցման կազմակերպման հիմնական ձևը դասն է: Դասի (մեկ ակադեմիական դասաժամի) տևողությունը 40 րոպե է:

11. Տարրական դպրոցում յուրաքանչյուր դասաժամի միջնամասում որոշակի ժամանակ հատկացվում է

ՈՒՍՈՒՄԱՆ

լիցքաթափող և վերականգնող վարժություններին ու խաղերին՝ Նախարարության մեթոդական ցուցումների համաձայն:

12. Ուսումնական պարապմունքների ընթացքում 3-12-րդ դասարանների սովորողներին տրվում են արձակուրդներ՝ աշնանային՝ 2020 թվականի նոյեմբերի 2-15-ը ներառյալ, ձմեռային՝ 2020 թվականի դեկտեմբերի 30-ից 2021 թվականի հունվարի 7-ը ներառյալ, գարնանային՝ 2021 թվականի մարտի 22-28-ը ներառյալ:

13. Առաջին դասարանցիների աշնանային արձակուրդները տրվում են 2020 թվականի նոյեմբերի 2-15-ը ներառյալ, ձմեռայինը՝ 2020 թվականի դեկտեմբերի 30-ից 2021 թվականի հունվարի 17-ը ներառյալ, գարնանայինը՝ 2021 թվականի մարտի 22-ից ապրիլի 4-ը ներառյալ:

14. Երկրորդ դասարանցիների աշնանային արձակուրդները տրվում են 2020 թվականի նոյեմբերի 2-15-ը ներառյալ, ձմեռայինը՝ 2020 թվականի դեկտեմբերի 30-ից 2021 թվականի հունվարի 17-ը ներառյալ և գարնանայինը՝ 2021 թվականի մարտի 22-28-ը ներառյալ:

15. Արցախի Հանրապետության տարածքային կառավարման լիազորված մարմին՝ շրջանների վարչակազմների (Ստեփանակերտի քաղաքապետարանի) (այսուհետ՝ Լիազոր մարմին) ենթակայության հաստատությունների համար սույն հավելվածի 12-րդ, 13-րդ և 14-րդ կետերով սահմանված արձակուրդների ժամկետներում Հաստատության նախաձեռնության դեպքում Լիազոր մարմնի կողմից կարող են կատարվել փոփոխություններ: Լիազոր մարմինը փոփոխությունները առնվազն հինգ աշխատանքային օր առաջ համաձայնեցնում է Նախարարության հետ:

16. Հաստատությունը անհաղթահարելի ուժի առաջացման դեպքում (եղանակային անբարենպաստ պայմաններ, սուր վարակիչ հիվանդությունների տարածում, տարերային աղետ և այլն), կրթության շարունակականությունը ապահովելու համար, կարող է հանրակրթական հիմնական կրթական ծրագրերն իրականացնել հեռավար ուսուցման ձևով:

17. Նախարարությունը անհաղթահարելի ուժի առաջացման դեպքում (եղանակային անբարենպաստ պայմաններ, սուր վարակիչ հիվանդությունների տարածում, տարերային աղետներ և այլն) կարող է սահմանել լրացուցիչ արձակուրդ՝ բաց թողնված ժամերը մինչև ուսումնական պարապմունքների ավարտը լրացնելու և ըստ Հաստատության ենթակայության՝ Լիազոր մարմնին տեղեկացնելու պայմանով: Անհաղթահարելի ուժի առաջացման դեպքում Հաստատության դիմումի հիման վրա Լիազոր մարմինը կարող է սահմանել լրացուցիչ արձակուրդ՝ այդ մասին հինգ աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնելով Նախարարությանը: Նախարարության ենթակայության հաստատություններում սույն հավելվածի 12-րդ, 13-րդ և 14-րդ կետերով սահմանված արձակուրդների ժամկետների փոփոխությունները, ինչպես նաև Հաստատության կողմից լրացուցիչ արձակուրդի նախատեսումը կատարվում է Հաստատության նախաձեռնությամբ՝ Նախարարության համաձայնությամբ:

18. Ոչ պետական ուսումնական

հաստատությունում արձակուրդների տևողությունը և ժամկետները, ինչպես նաև դրանցում կատարվող փոփոխությունները սահմանում է հիմնադիրը՝ այդ մասին հինգ աշխատանքային օրվա ընթացքում տեղյակ պահելով Նախարարությանը:

2. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄԱԿԱՆ ՊԼԱՆԻ ԸՆԴՀԱՆՐԱՎԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

19. Դպրոցական բաղադրիչի տնօրինման կարգ.

1) Դպրոցական բաղադրիչի ժամաքանակը հատկացվում է Ուսումնական պլանի պետական բաղադրիչով տվյալ դասարանի պետական պարտադիր առարկայացանկում նախատեսված և (կամ) Նախարարության կողմից երաշխավորված լրացուցիչ առարկայացանկում ընդգրկված առարկաներին, հոսքային կամ առանձին առարկաների խորացված ուսուցման ծրագրերի իրականացմանը և (կամ) սովորողների նախաիրություններին, Հաստատության առանձնահատկություններին, համայնքի կարիքներին համապատասխան կրթություն կազմակերպելու նպատակով,

2) Դպրոցական բաղադրիչի ժամաքանակը պետական պարտադիր առարկաներին բաշխելու դեպքում ուսուցումն իրականացվում է սույն Ուսումնական պլանի միջնակարգ դպրոցի ինչպես նաև ավագ դպրոցի հոսքերի ուսումնական պլանների ընդհանուր հանրակրթական առարկաների համար նախատեսված ծրագրերով,

3) Նախարարության կողմից հաստատված ծրագրերով երաշխավորվում է «Կիրառական տնտեսագիտություն» (9-րդ դասարան), «Կյանքի հմտություններ» (2-8-րդ դասարաններ), «Բնապահպանություն» (7-8-րդ կամ 8-9-րդ դասարաններ), «Եկոլոգիա» (8-9-րդ դասարաններ), «Էներգիայի և ռեսուրսների օգտագործում» (7-րդ կամ 8-րդ դասարան), «Ֆերմերային գործ» (11-12-րդ դասարաններ), «Տրամաբանություն» (11-րդ դասարան), «Գրաբար» (7-րդ կամ 8-րդ և 11-րդ դասարաններ), «Հայոց եկեղեցու պատմություն» (2-4-րդ դասարաններ), «Հայկական հարցի պատմություն» (11-րդ դասարան), «Հոգեբանություն» (7-8-րդ դասարաններ), «Մշակույթի պատմություն» (7-9-րդ դասարաններ), «Տնտեսագիտություն» (10-11-րդ դասարաններ), «Ձեռնարկատիրական կրթություն» (10-11-րդ դասարաններ) առարկաների ուսուցումը: Նշված առարկաների ուսուցումն այլ դասարաններում Հաստատության կողմից կարող է իրականացվել դրանց առարկայական ծրագրերը սահմանված կարգով Նախարարության կողմից հաստատվելուց հետո,

4) Հաստատությունը կարող է ներդնել նաև նոր առարկաներ (դասընթացներ)՝ դրանց ծրագրերը սահմանված կարգով Նախարարության կողմից հաստատվելուց հետո,

5) Հաստատության ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխումը կատարվում է մանկավարժական խորհրդի որոշմամբ՝ էլեկտրոնային Հաստատության, դասարանի պատրաստվածությունից, մանկավարժներով, ծրագրերով, դասագրքերով և երաշխավորված լրացուցիչ առարկայացանկի որևէ առարկայի լիարժեք ուսուցման կազմակերպման նպատակով Նախարարության կողմից հանրակրթական ուսումնական հաստատությունների համար երաշխավորված այլ ուսումնական գրականությամբ

ապահովվածությունից և ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ այլ պայմաններից, ինչպես նաև Նախարարության հանձնարարականներից:

6) Դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխումը պարտադիր է,

7) Դպրոցական բաղադրիչով սահմանված ժամաքանակի շրջանակում դասավանդվող առարկայացանկն ամրագրվում է Հաստատության ուսումնական պլանում և դասացուցակում:

20. Ուսումնական գործընթացի կազմակերպումը 12-րդ դասարանում.

1) 12-րդ դասարանում ուսումնասիրվող հանրակրթական պետական ծրագրի Ուսումնական պլանի նորմատիվային ծավալը սահմանվում է շաբաթական 34 դասաժամ՝ ապահովելով 12-րդ դասարանի ուսումնական պլանով նախատեսված բոլոր առարկաների ուսումնասիրությունը,

2) Հաստատության 12-րդ դասարանի ուսումնական պլանով նախատեսված առարկաների ուսումնասիրությունն ավարտվում է 2021 թվականի մարտի 21-ին տարեկան գնահատականով, բացառությամբ «Նախնական զինվորական պատրաստություն» (ՆՁՊ) և սովորողի կողմից 2021 թվականի մարտի 29-ից ուսումնասիրության համար ընտրված առարկաների,

3) 12-րդ դասարանում 2021 թվականի մարտի 29-ից սովորողի շաբաթական ուսումնական բեռնվածությունը ձևավորվում է պարտադիր ուսումնասիրության «Նախնական զինվորական պատրաստություն» (ՆՁՊ) (1 ժամ) առարկայի և սովորողի ընտրությամբ առնվազն երեք առարկայի ուսումնասիրության համար հատկացված ժամաքանակից՝ ապահովելով առնվազն 31 դասաժամ,

4) Նորմատիվային 34 դասաժամի և սովորողի ուսումնական պարտադիր բեռնվածության 31 դասաժամի տարբերությունից մնացած 3 դասաժամը տնօրինում է սովորողը,

5) 12-րդ դասարանում 2021թ. մարտի 29-ից սովորողների կողմից ընտրված առարկաներին Հաստատության ուսումնական պլանով հատկացված ժամաքանակը տրվում է այդ առարկաների ուսումնական նյութի կրկնությամբ: Ուսումնական նյութի կրկնությունը ինքնուրույն աշխատանքի միջոցով կարող է իրականացվել հեռավար կրթության տեխնոլոգիաների կիրառմամբ:

6) «Նախնական զինվորական պատրաստություն» (ՆՁՊ) և սովորողի կողմից ընտրված առարկաների ուսումնասիրությունը (կրկնությունը) ավարտվում է 2021 թվականի հունիսի 12-ին տարեկան գնահատականով,

7) 12-րդ դասարանում 2021 թվականի մարտի 29-ից ուսումնասիրության համար իրենց կողմից ընտրված ուսումնական առարկաների ցանկը Հաստատության սովորողները մինչև 2021 թվականի մարտի 1-ը գրավոր հայտնում են Հաստատության տնօրենին: Միասնական քննություններ հանձնող սովորողները ցանկում ներառում են նաև միասնական քննական առարկաները,

8) Քեթ Հաստատության ուսումնական պլանով նախատեսված որևէ առարկա(ներ) դասարանի սովորողներից ոչ մեկը չի ընտրել, ապա այդ առարկային(ներին) ուսումնական պլանով հատկացված ժամաքանակը վերաբաշխվում է տվյալ դասարանի սովորողների կողմից ընտրված ուսումնական առարկաներին, և կազմվում է տվյալ դասարանի 2021 թվականի մարտի 29-ից հունիսի 12-ն ընկած ժամանակահատվածի ուսումնական

պլանը,

9) Դասարանի ուսումնական պլանին համապատասխան կազմվում է տվյալ դասարանի դասացուցակը,

10) Մեկից ավելի դասարանների առկայության դեպքում կարող են ձևավորվել միևնույն առարկան ուսումնասիրող զուգահեռ դասարանների սովորողներից կազմված ուսումնական խմբեր: Այդ դեպքում տվյալ ուսումնական առարկայից անհրաժեշտ գրանցումները կատարվում են առարկայական դասամատյանում: Տարեկան գնահատականներն այնուհետև փոխանցվում են դասարանի հիմնական դասամատյան,

11) 12-րդ դասարանի սովորողի կողմից 2021 թվականի մարտի 29-ից ընտրված առարկաների ուսումնական նյութի կրկնությունը սույն կետի 5-րդ ենթակետի պահանջներին համապատասխան կազմակերպվում է դասարանային (դասացուցակին համապատասխան) և արտադասարանային ինքնուրույն ուսումնական գործունեության տեսակներով,

12) Սովորողը մասնակցում է միայն իր ընտրած առարկաների դասարանային ուսումնական պարապմունքներին,

13) Սովորողը մասնակցում է արտադասարանային ուսումնական պարապմունքներին այն դեպքում, երբ դասացուցակով նրա շաբաթական բեռնվածությունը պակաս է 31 դասաժամից,

14) Սովորողի արտադասարանային պարապմունքներին մասնակցության տևողությունը որոշվում է 31 ժամի և սովորողի դասացուցակային բեռնվածության տարբերությամբ,

15) Արտադասարանային պարապմունքներին սովորողի(ների) մասնակցությունը հաշվառվում է և գրանցվում համապատասխան մատյանում,

16) Արտադասարանային ինքնուրույն ուսումնական գործունեության տեսակներ են՝ ուսուցիչների կողմից տրված հանձնարարությունների կատարումը, լրացուցիչ ուսումնական գրականության և այլ աղբյուրների ուսումնասիրումը, գործնական և փորձնական աշխատանքների կատարումը, հիմնահարցերի հետազոտումը, ստեղծագործական աշխատանքը, տեխնիկական սարքերով և գործիքներով աշխատանքների կատարումը, գրավոր աշխատանքները, նոր տեխնոլոգիաների, համակարգչային ծրագրերի կիրառումը, անհատական և խմբային, ինքնուրույն և համագործակցային աշխատանքների կատարումը, ուսումնական էքսկուրսիաների անցկացումը և այլն,

17) Սովորողը իր տնօրինմանը հատկացված 3 ժամը կարող է օգտագործել կրթական այլ ծառայություններ ստանալու նպատակով՝ տվյալ Հաստատությունում կամ այլ հաստատություններում:

21. Օտար լեզվի ընտրության կարգ.

1) Հաստատություններում դասավանդվում է երկու օտար լեզու, որոնցից մեկը ռուսերենն է, մյուսը՝ անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և այլ լեզուներից որևէ մեկը,

2) Հաստատության ընտրությամբ երրորդ օտար լեզու (բացի ռուսերենից և մյուս օտար լեզվից) կարելի է դասավանդել դպրոցական բաղադրիչի ժամաքանակի հաշվին՝ 5-9-րդ դասարաններում (շաբաթական 2 ժամ) և 11-12-րդ դասարաններում (շաբաթական 2 ժամ)՝ Նախարարության կողմից հաստատված չափորոշիչների և ծրագրերի, ուսումնական գրականության հիման վրա, ուսուցման համար անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում:

ՈՒՍՊԵՏՈՒԹՅԱՆ ՊՐԱԿՏԻԿ

5-րդ դասարանում՝ 3-րդ, 4-րդ և 6-րդ դասարանում՝ 5-րդ, 6-րդ դասարանների ծրագրերը լրիվությամբ ուսուցանելու համար լրացուցիչ հատկացվում է մեկական ժամ՝ խմբակային պարապմունքների համար նախատեսված ժամերից. 10-րդ դասարանում հատկացվում է շաբաթական 2 ժամ՝ խմբակային պարապմունքների համար նախատեսված ժամերից.

3) Նախարարության կողմից՝ Հաստատության մանկավարժական խորհրդի և ըստ Հաստատության ենթակայության լիազոր մարմնի առաջարկությունների հիման վրա, կարող է փոխարինվել Հաստատությունում դասավանդվող երկրորդ օտար լեզուն (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և այլն) այլ օտար լեզվով, ինչպես նաև որոշվել նոր հիմնադրված Հաստատությունում դասավանդվող երկրորդ օտար լեզուն:

3. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԻ ՊԱՐՁԱՐԱՆՈՒՄՆԵՐ

22. Հանրակրթական դպրոցի դասարանը կազմավորվում է տվյալ դասարան փոխադրված և ընդունված սովորողների ընդհանուր թվի միջին թվաքանականի հաշվարկով: Տարրական և միջին դպրոցների դասարաններում սովորողների թիվը սահմանվում է 25-35, իսկ ավագ դպրոցում՝ 20-30: Դասարանում սովորողների առավելագույն թիվը տարրական և միջին դպրոցում չի կարող գերազանցել 35-ը, ավագ դպրոցում՝ 30-ը:

Հիմնադրի կողմից սահմանված խտությունից ավելի պակաս խտությամբ դասարան կարող է բացվել Հաստատության ֆինանսական միջոցների առկայության դեպքում՝ Հաստատության խորհրդի որոշմամբ:

23. Տարրական դպրոցում «Ռուսաց լեզու», «Օտար լեզու» և «Շախմատ», միջին դպրոցում և ավագ դասարաններում «Հայոց լեզու», «Ռուսաց լեզու», «Օտար լեզու» և «Ինֆորմատիկա» (համակարգչային դասարանի առկայության դեպքում) առարկաների պարապմունքներից դասարանը կարելի է բաժանել երկու խմբի, եթե սովորողների թիվը 26 և ավելի է:

24. Դասարանը նույն կարգով կարող է կիսվել երկու խմբի նաև Նախարարության երաշխավորած «Գրաբար» (7-րդ կամ 8-րդ, 11-րդ դասարաններ) առարկայի պարապմունքների ժամանակ՝ դպրոցական բաղադրիչի ժամաքանակն այդ առարկային տրամադրելու դեպքում:

25. «Տեխնոլոգիա» առարկայի (5-7-րդ դասարաններ) պարապմունքներին դասարանը կիսվում է երկու խմբի՝ տղաների և աղջիկների, եթե տվյալ դասարանի ընդհանուր աշակերտների թիվը 12 և ավելի է (ուսուցումը կազմակերպվում է յուրաքանչյուր խմբի համար հաստատված համապատասխան առարկայական ծրագրով):

26. Անհրաժեշտության դեպքում Հաստատությունը իրավասու է վերաբաշխելու առարկաների ուսուցմանը Ուսումնական պլանով հատկացված ժամերը՝ պահպանելով տվյալ առարկայի տարեկան ընդհանուր ժամաքանակը:

27. 2020-2021 ուսումնական տարում նախարարության կողմից երաշխավորված «Առողջ ապրելակերպ» դասընթացին հատկացված 14 դասաժամ տրամադրվում է «Ֆիզկուլտուրա» առարկային:

28. 6-12-րդ դասարաններում «Հայոց լեզու», «Մաթեմատիկա», «Ինֆորմատիկա», «Քիմիա», «Ֆիզիկա», «Կենսաբանություն», «Հայոց պատմություն» և այլ առարկաների ծրագրերով ամսական

առնվազն 1 (մեկ) ժամ ուսուցումը կազմակերպվում է համակարգչային կաբինետում (դրա առկայության դեպքում)՝ ելնելով յուրաքանչյուր առարկայից մատուցվող ուսումնական նյութի բովանդակային և դասավանդման մեթոդական պահանջներից: Այն առավել արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ է օգտագործել «Հայկական կրթական միջավայրի պաշարների շտեմարանում» (<http://lib.amedu.am>) տեղադրված էլեկտրոնային ուսումնական նյութերը:

29. 6-7-րդ դասարաններում «Կերպարվեստ» առարկան դասավանդվում է մինչև փետրվարի 27-ը, իսկ «Երաժշտություն» առարկան 2021 թվականի մարտի 1-ից մինչև հունիսի 12-ը՝ ապահովելով սույն հավելվածով սահմանված՝ տվյալ առարկայի տարեկան ընդհանուր ժամաքանակի պահպանման պահանջը:

30. «Հայոց պատմություն» և «Համաշխարհային պատմություն» առարկաների համաժամանակյա թեմաների ուսուցումն ապահովելու նպատակով ուսուցիչներին իրավունք է տրվում մասնակի փոփոխություններ կատարելու նշված առարկաների դասացանկում՝ պահպանելով յուրաքանչյուր առարկային հատկացված տարեկան ընդհանուր ժամաքանակը:

31. Հաստատությունում, ըստ կրթական ծրագրերի աստիճանների, տարրական, միջին և ավագ դպրոցներում հատուկ բժշկական խմբերում ընդգրկված սովորողների համար «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի ուսուցումը կարող է իրականացվել Հանրակրթական դպրոցի հատուկ բժշկական խմբերի «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի 1-12-րդ դասարանների ծրագրով, Հաստատության խմբակների համար նախատեսված ժամաքանակի շրջանակում կամ տվյալ դասարանի «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասաժամերին՝ անհատական ծրագրով: Հաստատությունում հատուկ բժշկական խմբերում ընդգրկված սովորողների գնահատումը «Ֆիզիկական կուլտուրա» առարկայից չի կատարվում:

4. ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱՎԱՆԱՑՆՈՂ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՐԾՈՂ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՀՈՍՔԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՎԱԳ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ 2020-2021 ՈՒՍՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԿԱՍՈՒՄԻ ՈՒՍՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԼԱՆՆԵՐ

32. Հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող առանձին գործող ավագ դպրոցի (այսուհետ՝ Ավագ դպրոց) Ուսումնական պլանները սահմանում են հոսքային ուսուցման ծրագրեր իրականացնող Ավագ դպրոցում միջնակարգ կրթության բովանդակության կառուցվածքը՝ ըստ տարբերակված հոսքերի, հանրակրթական ուսումնական առարկաներին հատկացվող շաբաթական ժամաքանակները՝ ըստ բաղադրիչների և սովորողների շաբաթական ուսումնական բեռնվածության առավելագույն չափը՝ ըստ դասարանների:

33. Ավագ դպրոցում երաշխավորվում են հոսքերի հետևյալ խմբերը՝

- 1) հիմնական հումանիտար, բնագիտամաթեմատիկական, արհեստագործական,
- 2) ընդհանուր:
- 34. Ավագ դպրոցի 10-12-րդ դասարանների Ուսումնական պլաններն ըստ

հոսքերի տրված են՝

- 1) ընդհանուր հոսքը՝ «Հաստատության ուսումնական պլան»-ում (համաձայն աղյուսակ 1-ի),
- 2) հումանիտար հոսքը՝ «Հանրակրթական ավագ դպրոցի հումանիտար հոսքի X-XII դասարանների ուսումնական պլան»-ում (համաձայն աղյուսակ 2-ի),
- 3) բնագիտամաթեմատիկական հոսքը՝ «Հանրակրթական ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքի X-XII դասարանների ուսումնական պլան»-ում (համաձայն աղյուսակ 3-ի),
- 4) արհեստագործական հոսքը՝ «Հանրակրթական ավագ դպրոցի արհեստագործական հոսքի X-XII դասարանների ուսումնական պլան»-ում (համաձայն աղյուսակ 4-ի):
- 35. Ուսումնական պարապմունքները Ավագ դպրոցում սկսվում են 2020 թվականի սեպտեմբերի 14-ին և ավարտվում 2021 թվականի հունիսի 12-ին՝ ապահովելով ոչ պակաս, քան 34 ուսումնական շաբաթ Ավագ դպրոցի յուրաքանչյուր դասարանի համար: Բոլոր պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսումնական շաբաթվա տևողությունը սահմանում է ուսումնական հաստատությունը՝ 15-օրյա ժամկետում համաձայնեցնելով Նախարարության հետ:
- 36. Ուսումնական պլանի ընդհանուր հանրակրթական, հոսքային, դպրոցական բաղադրիչներն ուղղված են հանրակրթության պետական չափորոշչով, առարկայական չափորոշիչներով և ծրագրերով ամրագրված գիտելիքների, կարողությունների ու հմտությունների ապահովմանը:
- 37. Ավագ դպրոցում գործում է գնահատման տասը միավորային սանդղակ: Ընթացիկ գնահատման ժամանակ կարող է կիրառվել նաև գնահատման այլ սանդղակ, որը բերվում է տասը միավորային գրանցման:
- 38. Ավագ դպրոցում խմբային ուսուցման կազմակերպման հիմնական ձևը դասն է:
- 39. Սովորողների ընթացիկ գնահատականների հիման վրա ձևավորվում են տարեկան գնահատականները: 12-րդ դասարանի ուսումնական պլանով նախատեսված բոլոր առարկաներից տարեկան գնահատականները նշանակվում են մինչև 2021 թվականի մարտի 21-ը, բացառությամբ «Նախնական գիմնոզիական պատրաստություն» առարկայի և սովորողի ընտրությամբ 2021 թվականի մարտի 29-ից մինչև հունիսի 12-ը ուսումնասիրվող կամ կրկնության համար ընտրված առարկաների:
- 40. Ուսումնական պարապմունքների ընթացքում 10-12-րդ դասարանների սովորողներին տրվում են արձակուրդներ. աշնանային՝ 2020 թվականի նոյեմբերի 2-15-ը ներառյալ, ձմեռային՝ 2020 թվականի դեկտեմբերի 30-ից 2021 թվականի հունվարի 7-ը ներառյալ, գարնանային՝ 2021 թվականի մարտի 22-28-ը ներառյալ:
- 41. Հոսքային ուսուցման առարկաների դասերին դասարանի միջին խտությունը կարող է սահմանվել 12-15 սովորող՝ ոլորտը կարգավորող նորմերի պահպանմամբ:
- 42. Ավագ դպրոցի Ուսումնական պլանների ընդհանուր հանրակրթական բաղադրիչի «Հայոց լեզու», «Ռուսաց լեզու», «Օտար լեզու», «Ինֆորմատիկա» (համակարգչային դասարանի առկայության դեպքում) առարկաների և արհեստագործական մասնագիտական դասընթացների դասաժամերին դասարանը կարող է բաժանվել երկու խմբի, եթե տվյալ

դասարանի սովորողների թիվը 20 և ավելի է:

43. Ավագ դպրոցի միևնույն դասարանի(ների) սովորողները ընդհանուր հանրակրթական բաղադրիչի շրջանակում ուսումնասիրվող երկրորդ օտար լեզվի (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն կամ որևէ այլ լեզու) դասաժամին խմբավորվում են ըստ իրենց կողմից հիմնական դպրոցում ուսումնասիրված օտար լեզվի՝ անկախ սովորողների թվից, բայց ոչ ավելի, քան երեք օտար լեզվի (բացի ռուսերենից) համար:

44. 12-րդ դասարանում ուսումնական գործընթացն իրականացվում է սույն հավելվածի 20-րդ կետի պահանջներին համապատասխան:

45. Օրինակելի ուսումնական պլանների կառուցվածքը.

Հոսքային (խորացված) ուսուցման Ուսումնական պլանները կազմված են ընդհանուր հանրակրթական, հոսքային (արհեստագործական հոսքում՝ մասնագիտական) և դպրոցական բաղադրիչներից.

1) Ընդհանուր հանրակրթական բաղադրիչը ներառում է հանրակրթական ուսումնական առարկան(երը) և յուրաքանչյուր առարկայի համար նախատեսված շաբաթական ժամաքանակները՝ ըստ դասարանների: Ընդհանուր հանրակրթական առարկաները պարտադիր են տվյալ հոսքի (ենթահոսքի) համար,

2) Հոսքային բաղադրիչով սահմանված ժամաքանակը տրամադրվում է խորացված ուսուցմամբ առարկաների դասավանդմանը, իսկ արհեստագործական հոսքում՝ մասնագիտական դասընթացներին: Հոսքային բաղադրիչում ընդգրկված առարկաները (դասընթացները) ուղղված են սովորողի հետագա մասնագիտական կրթության հիմքերի ստեղծմանը և հանրակրթությունից մասնագիտական կրթության անցման շարունակականության ապահովմանը, իսկ արհեստագործական հոսքի պարագայում՝ նախնական մասնագիտական կրթության որոշակի որակավորումների շրջանակում համապատասխան հմտությունների ձեռքբերմանը,

3) Նախարարությունը, հաշվի առնելով տվյալ Ավագ դպրոցի առանձնահատկությունները, խորացված ուսուցմամբ առարկաների ցանկում կատարում է փոփոխություններ՝ տվյալ հոսքի խորացված ուսուցման առարկաներին ավելացնելով նոր առարկաներ՝ Ավագ դպրոցի առաջարկության և սահմանված կարգով հաստատված առարկայական ծրագրի(երի) առկայության դեպքում,

4) Դպրոցական բաղադրիչն ընդգրկում է հոսքային ուսուցման բովանդակությունը լրացնող ընտրովի (լրացուցիչ) առարկաները, դասընթացները և դրանց ուսուցման համար ըստ դասարանների նախատեսված ժամաքանակները: Այս բաղադրիչը տնօրինում է դպրոցը՝ ղեկավարվելով Նախարարության կողմից հաստատված լրացուցիչ առարկայացանկով,

5) Ավագ դպրոցը Ուսումնական պլանների հիման վրա ընդհանուր հանրակրթական, հոսքային և դպրոցական բաղադրիչների տնօրինմամբ մշակում է յուրաքանչյուր հոսքի՝ տվյալ ուսումնական տարվա ենթահոսքերի իր ուսումնական պլանները: Ենթահոսքերի ուսումնական պլանները կազմելիս դպրոցն ընդհանուր հանրակրթական և հոսքային բաղադրիչներով նախատեսված ժամաքանակի բաշխումից հետո մնացած ժամաքանակը հատկացնում է դպրոցական բաղադրիչին,

6) Ընդհանուր հանրակրթական, հոսքային և դպրոցական բաղադրիչները ֆի-

2020-2021

մանավորվում են պետական բյուջեից, 7) 10-րդ, 11-րդ և 12-րդ դասարաններում շաբաթական ուսումնական պարտադիր բեռնվածությունը բոլոր հոսքերում սահմանվում է 34 դասաժամ:

46. Գպրոցական բաղադրիչի տնօրինման կարգը հոսքային ուսուցմամբ դասարաններում.

1) Գպրոցական բաղադրիչի ժամաքանակը տրամադրվում է Նախարարության կողմից հաստատված լրացուցիչ առարկայացանկի, ինչպես նաև տվյալ հոսքային ուսուցմամբ դասարանի ընդհանուր հանրակրթական և հոսքային ուսուցման բաղադրիչների առարկաներին,

2) Ավագ դպրոցի խորացված ուսուցմամբ հոսքերի համար կարող են երաշխավորվել լրացուցիչ հետևյալ՝ «Գրաբար» (11-րդ դասարան), «Արտասահմանյան գրականություն» (11-րդ դասարան), «Բանահյուսություն» (հին և միջնադարյան շրջան, 11-րդ դասարան), «Ճարտասանություն» (11-րդ դասարան), «Արևմտահայերեն» (10-րդ կամ 11-րդ դասարան), «Պետության և իրավունքի հիմունքներ» (11-րդ դասարան), «Հայկական հարցի պատմություն» (11-րդ դասարան), «Հնագիտություն» (10-րդ դասարան), «Ազգագրություն» (10-րդ դասարան), «Հայաստանի հարակից երկրների պատմություն» (11-րդ դասարան), «Կրոնի պատմություն» (11-րդ դասարան), «Արվեստի պատմություն» (10-11-րդ դասարաններ), «Հայոց եկեղեցու պատմություն» (բնագիտամաթեմատիկական հոսք, 10-11-րդ դասարաններ), «Քրիստոնեական բարոյագիտություն» (12-րդ դասարան), «Բարոյագիտություն» (10-րդ դասարան), «Տրամաբանություն» (11-րդ դասարան), «Թվային համակարգեր» (10-րդ դասարան), «Երկրաչափության հիմունքներ» (12-րդ դասարան), «Դիսկրետ մաթեմատիկայի տարրեր» (11-րդ դասարան), «Աստղագիտություն» (10-11-րդ դասարաններ), «Ռադիոէլեկտրոնիկա» (11-րդ դասարան), «Բնօգտագործման և բնապահպանության հիմունքներ» (10-11-րդ դասարաններ), «Էկոլոգիայի և կայուն զարգացման հիմունքներ» (10-11-րդ դասարաններ), «Կիրառական քիմիա» (11-րդ դասարան), «Գիտական ճանաչողության հիմունքներ» (11-րդ դասարան), «Բնական գիտությունները և մաթեմատիկան» (10-րդ դասարան), «Բնագիտական մտքի պատմություն» (11-րդ դասարան), «Երկրագիտություն» (ուսումնասիրվող օտար լեզվով), «Քերականություն և բառագիտություն» (ուսումնասիրվող օտար լեզվով), «Գրականություն» (ուսումնասիրվող օտար լեզվով), «Մասնագիտական կողմնորոշում» (10-րդ կամ 11-րդ դասարաններ), «Տնտեսագիտություն» (10-11-րդ դասարաններ), «Ձեռնարկատիրական կրթություն» (10-11-րդ դասարաններ) առարկաների ուսուցումը՝ դրանց առարկայական ծրագրերը Նախարարության կողմից հաստատվելուց հետո,

3) Հաստատությունը կարող է ներդնել նաև նոր առարկաներ (դասընթացներ)՝ դրանց ծրագրերը սահմանված կարգով Նախարարության կողմից հաստատվելուց հետո:

47. 2020-2021 ուսումնական տարում նախարարության կողմից երաշխավորված «Առողջ ապրելակերպ» դասընթացին հատկացված 14 դասաժամը տրամադրվում է «Ֆիզկուլտուրա» առարկային:

48. Օտար լեզվի ընտրության կարգ.

1) Ավագ դպրոցում դասավանդվում է առնվազն երկու օտար լեզու, որոնցից մեկը ռուսերենն է, մյուսը՝ անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն կամ որևէ այլ լեզու,

2) Հաստատության ընտրությամբ երրորդ (հիմնական և մյուս օտար լեզվից բացի) օտար լեզու (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և այլն) կարելի է դասավանդել Նախարարության կողմից հաստատված համապատասխան առարկայական չափորոշիչներով և ծրագրերով (շաբաթական երկու ժամ), ուսումնական գրականության հիման վրա, ուսուցման համար անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում,

3) Ավագ դպրոցը դասավանդվող օտար լեզուն կարող է փոխարինել այլ օտար լեզվով՝ Նախարարության որոշմամբ: Նախարարությունը քննարկում է Ավագ դպրոցի մանկավարժական խորհրդի առաջարկությունը օտար լեզվի փոխարինման վերաբերյալ և կայացնում համապատասխան որոշում,

4) Նոր հիմնադրված Ավագ դպրոցում դասավանդվող երկրորդ օտար լեզուն Հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ որոշում է Նախարարությունը:

49. Սույն հավելվածի աղյուսակների պարզաբանումներ.

1) Սույն հավելվածի Աղյուսակ 2-ում՝ ա. «1» նշագրումը նշանակում է, որ որպես խորացված ուսուցման առարկաներ՝ սովորողն ընտրում է բերված ցանկից մինչև չորս առարկա,

բ. «2» նշագրումը նշանակում է, որ բնագիտական առարկաներ են համարվում «Ֆիզիկան», «Քիմիան», «Կենսաբանությունը» և «Աշխարհագրությունը»,

գ. «Օտար լեզու1» և «Ռուսաց լեզու1» առարկաներն ընտրելու դեպքում սովորողը չի ուսումնասիրում «Օտար լեզու2» և «Ռուսաց լեզու2» առարկաները:

2) Սովորողը խորացված ուսուցմամբ առարկայացանկից (հոսքային բաղադրիչ) ընտրում է որոշակի թվով առարկաներ՝ համաձայն սույն կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության պարզաբանման: Այդ դեպքում սովորողը չի ուսումնասիրում ուսումնական պլանի ընդհանուր հանրակրթական բաղադրիչում ընդգրկված միևնույն առարկաները,

3) Հումանիտար հոսքի որևէ ենթահոսքի առարկաների՝ հոսքային և ընդհանուր հանրակրթական բաղադրիչներով սահմանված ժամաքանակի բաշխումից հետո մնացած ժամաքանակը տրվում է ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչին: Գպրոցական բաղադրիչի ժամաքանակը բաշխվում է սույն հավելվածի 10-րդ կետի համաձայն՝ պահպանելով տվյալ դասարանի համար ուսումնական պլանով սահմանված շաբաթական ժամաքանակը: Ուսուցումը կազմակերպվում է Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի կողմից հաստատված հոսքային և/կամ ընդհանուր հանրակրթական առարկաների ծրագրերով՝ ուսուցչի ընտրությամբ,

4) Ավագ դպրոցի հումանիտար հոսքի ուսումնական պլանով (համաձայն սույն հավելվածի Աղյուսակ 2-ի)՝ 11-րդ դասարանում դպրոցական բաղադրիչում ձևավորված ժամաքանակից 0,5 ժամ կարող է հատկացվել «Հասարակագիտություն» առարկային՝ հանրակրթական դպրոցի ընդհանուր հոսքի համար նախատեսված ծրագրով ուսուցում կազմակերպելու նպատակով (համաձայն սույն հավելվածի Աղյուսակ 1-ի),

5) Ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքի ուսումնական պլանով (համաձայն սույն հավելվածի Աղյուսակ 3-ի)՝

ա. «1» նշագրումը նշանակում է, որ որպես խորացված ուսուցման առարկաներ՝ սովորողն ընտրում է բերված ցան-

կից մինչև երեք առարկա, բ. «2» նշագրումը նշանակում է, որ բնագիտական առարկաներ են համարվում «Ֆիզիկան», «Քիմիան», «Կենսաբանությունը» և «Աշխարհագրությունը»,

գ. «Օտար լեզու1» առարկան ընտրելու դեպքում սովորողը չի ուսումնասիրում «Օտար լեզու2» առարկան:

6) Սույն հավելվածի Աղյուսակ 3-ում՝ ա. Սովորողը խորացված ուսուցմամբ առարկայացանկից (հոսքային բաղադրիչ) առարկաները ընտրելու դեպքում չի ուսումնասիրում ուսումնական պլանի ընդհանուր հանրակրթական բաղադրիչում ընդգրկված միևնույն առարկաները),

բ. Բնագիտամաթեմատիկական հոսքի որևէ ենթահոսքի առարկաների՝ հոսքային և ընդհանուր հանրակրթական բաղադրիչներով սահմանված ժամաքանակի բաշխումից հետո մնացած ժամաքանակը տրվում է ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչին,

գ. Գպրոցական բաղադրիչի ժամաքանակը բաշխվում է սույն հավելվածի 19-րդ կետի համաձայն՝ «Գպրոցական բաղադրիչի տնօրինման կարգի» համաձայն՝ պահպանելով տվյալ դասարանի համար ուսումնական պլանով սահմանված շաբաթական ժամաքանակը: Ուսուցումը կազմակերպվում է հոսքային և ընդհանուր հանրակրթական առարկաների՝ Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի կողմից հաստատված առարկայական ծրագրերով՝ ուսուցչի ընտրությամբ,

դ. 11-12-րդ դասարաններում «Հասարակագիտություն» առարկան ուսումնասիրվում է հանրակրթական դպրոցի հումանիտար և բնագիտամաթեմատիկական հոսքերի համար նախատեսված ծրագրով,

ե. Եթե սովորողը 12-րդ դասարանում չի ուսումնասիրում «Օտար լեզու1» առարկան, ապա շարունակում է ընդհանուր հանրակրթական բաղադրիչում ընդգրկված «Օտար լեզու2» և «Ռուսաց լեզու» առարկաների համապատասխան ծրագրերի ուսումնասիրությունը,

զ. «Համաշխարհային պատմություն» առարկան ավագ դպրոցի մանկավարժական խորհրդի որոշմամբ կարող է ընդգրկվել սույն հավելվածի Աղյուսակ 3-ի ընդհանուր հանրակրթական բաղադրիչի առարկայացանկում և ուսումնասիրվել առարկայի՝ ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի համար երաշխավորված ծրագրով,

7) Սույն հավելվածի Աղյուսակ 4-ում՝ ա. «1» նշագրումը նշանակում է, որ մասնագիտական դասընթացներ (առարկաներ) են համարվում դպրոցի կողմից իրականացվող նախամասնագիտական ուսումնական ծրագրերը,

բ. «2» նշագրումը նշանակում է, որ բնագիտական առարկաներ են համարվում «Ֆիզիկան», «Քիմիան», «Կենսաբանությունը» և «Աշխարհագրությունը»,

8) Ավագ դպրոցի արհեստագործական հոսքի ուսումնական պլանով (համաձայն սույն հավելվածի Աղյուսակ 4-ի)՝

ա. Մասնագիտական դասընթացների (առարկաների) ժամաքանակը ներառում է նաև պրակտիկ ուսուցման ժամերը,

բ. Ուսումնական պլանով 12-րդ դասարանի 2021 թվականի մարտի 29-ից հունիսի 12-ն ընկած ժամանակահատվածի ժամաքանակը տնօրինվում է սույն հավելվածի 20-րդ կետով սահմանված կարգով՝ ներառյալ ուսումնական պրակտիկայի կազմակերպումը: Ուսուցումը կազմակերպվում է Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի կողմից հաստատ-

ված հոսքային և/կամ ընդհանուր հանրակրթական առարկաների ծրագրերով՝ ուսուցչի ընտրությամբ,

գ. «Համաշխարհային պատմություն» առարկան դպրոցի մանկավարժական խորհրդի որոշմամբ կարող է ընդգրկվել ընդհանուր հանրակրթական բաղադրիչի առարկայացանկում և ուսումնասիրվել առարկայի՝ ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի համար երաշխավորված ծրագրով (համաձայն սույն հավելվածի Աղյուսակ 4-ի),

9) Ռուսերենով ուսուցմամբ միջնակարգ հանրակրթական դպրոցի (դասարանի) ուսումնական պլանի (համաձայն սույն հավելվածի Աղյուսակ 6-ի)՝ «Մայրենի» (հայերեն) առարկայի դասաժամերը 1-ին դասարանում հատկացվում են բանավոր խոսքի զարգացմանը, տառուսուցմանը,

10) Ռուսերենով ուսուցմամբ դասարանների ուսումնական պլանով (համաձայն սույն հավելվածի Աղյուսակ 6-ի)՝ 6-9-րդ դասարաններում «Հայոց եկեղեցու պատմությանը» լրացուցիչ դասաժամեր չեն հատկացվում,

11) Տնային և հիվանդանոցային պայմաններում երկարատև բուժվող երեխաների անհատական ուսուցման ուսումնական պլանով (համաձայն Աղյուսակ 7-ի) և տնային ու հիվանդանոցային պայմաններում երկարատև բուժվող չափավոր և ծանր մտավոր հետամնացություն ունեցող երեխաների անհատական ուսուցման ուսումնական պլանով (համաձայն Աղյուսակ 8-ի),

ա. Ռուսերենով ուսուցման դեպքում ռուսաց լեզվին տրվում են հայերենի (տարրական դպրոցում՝ «Մայրենի», միջին և ավագ դպրոցում՝ «Հայոց լեզու և գրականություն» առարկաների) համար հատկացված դասաժամերը՝ ապահովելով նույն ժամաքանակի սահմաններում նաև ռուս գրականության ուսուցումը, իսկ ռուսերենի համար նախատեսված ժամաքանակը տրվում է հայոց լեզվի ուսուցմանը: 1-ին դասարանում ռուսաց լեզվին հատկացված ժամաքանակից 2 ժամը տրվում է հայերենի (Մայրենիի) ուսուցմանը,

բ. Տնային պայմաններում ուսուցում կազմակերպվում է բնակավայրը սպասարկող բուժփնիմարկի փաստաթղթերի հիման վրա (եթե բուժման ընթացքը տնային պայմաններում շարունակվելու է մեկ ամսից ավելի)՝ Հաստատության ենթակայության՝ համապատասխան Լիազորված մարմնի գիտությամբ: Տնային ուսուցում կազմակերպվում է վնասվածքների և հիվանդությունների դեպքում, որոնք հանգեցնում են տեղաշարժման սահմանափակման կամ տնային պայմաններում խնամքի կամ մեկուսացման կազմակերպված անհրաժեշտության՝ հիվանդության սկզբից 22 և ավելի օր տևողությամբ,

գ. Տնային պայմաններում ուսուցման կազմակերպումը իրականացնում է այն Հաստատությունը, որտեղ հաշվառված է սովորողը: Տնային ուսուցում կարող է կազմակերպվել հեռավար ուսուցման տեխնոլոգիաների կիրառմամբ:

դ. Տնային պայմաններում ուսուցում կազմակերպող ուսուցիչները վճարվում են դրույքաչափով, եթե ուսուցումը նախատեսվում է ամբողջ ուսումնական տարվա համար, մնացած դեպքերում՝ ժամավճարով,

ե. Հիվանդանոցներում երկարատև բուժվող երեխաների ուսուցումը կազմակերպվում է ըստ դասարանների՝ վերոնշյալ կարգի պահպանմամբ, տվյալ բուժհաստատությունը սպասարկող ուսումնական Հաստատության կողմից (համաձայն Աղյուսակ 7-ի):

ՌԻՍՊԱՆ

Աղյուսակ 1

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԴՐԱՆ

Ուսումնական առարկաներ	Շաբաթական ժամերի քանակը											
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Մայրենի	7	8	8	8	7	6	-	-	-	-	-	-
Հայոց լեզու	-	-	-	-	-	-	3	2	2	2	2	2
Գրականություն	-	-	-	-	-	-	2	3	3	-	-	-
Հայ գրականություն	-	-	-	-	-	-	-	-	-	2	3	3
Ռուսաց լեզու	-	2	2	3	3	3	3	3	3	2	2	2
Օտար լեզու	-	-	2	2	2	2	2	2	2	2	2	2
Մաթեմատիկա	4	4	4	4	5	5	-	-	-	-	-	-
Երաժշտություն	2	1	1	1	1	0.5	0.5	-	-	-	-	-
Կերպարվեստ	2	1	1	1	1	0.5	0.5	-	-	-	-	-
Ես և շրջակա աշխարհը	-	1	1	2	-	-	-	-	-	-	-	-
Հայրենագիտություն	-	-	-	-	1	-	-	-	-	-	-	-
Բնագիտություն	-	-	-	-	2	2	-	-	-	-	-	-
Աշխարհագրություն	-	-	-	-	-	1	1	2	-	2	1	1
Հայաստանի աշխարհագրություն	-	-	-	-	-	-	-	-	2	-	-	-
Հայոց պատմություն	-	-	-	-	-	1.5	1.5	1.5	1.5	2	2	2
Համաշխարհային պատմություն	-	-	-	-	-	1	1	1	1	1	1	1
Հայոց եկեղեցու պատմություն	-	-	-	-	1	1	1	1	1	1	1	-
Հասարակագիտություն	-	-	-	-	-	-	-	1	1	2	2	2
Հանրահաշիվ	-	-	-	-	-	-	3	3	3	2.5	2.5	2.5
Երկրաչափություն	-	-	-	-	-	-	2	2	2	1.5	1.5	1.5
Ինֆորմատիկա	-	-	-	-	-	1	1	1	1	1	1	1
Ֆիզիկա	-	-	-	-	-	-	2	2	2	3	3	3
Քիմիա	-	-	-	-	-	-	1.5	2	2	2	2	2
Կենսաբանություն	-	-	-	-	-	-	2	2	2	2	2	2
Տեխնոլոգիա	2	2	1	1	1	1	2	-	-	-	-	-
ՆՁՊ	-	-	-	-	-	-	-	1	1	1	1	1
Ֆիզկուլտուրա	3	2	2	2	3	3	3	3	3	3	3	1.5
Շախմատ	-	2	2	2	-	-	-	-	-	-	-	-
Դպրոցական բաղադրիչ	-	1	2	2	2	2.5	2	2.5	2.5	2	2	4.5
Ընդամենը	20	24	26	28	29	31	34	35	35	34	34	34

Աղյուսակ 2

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԱՎԱԳ ԳՊՐՈՋԻ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՀՈՍԷԻ X-XII ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԴՐԱՆ

Առարկայախումբ	Առարկա	Շաբաթական ժամերի քանակը		
		X	XI	XII
Հոսքային բաղադրիչ				
Խորացված ուսուցմամբ առարկաներ ¹	Հայոց լեզու-1	2	2	3
	Հայ գրականություն-1	3	4	5
	Հայոց պատմություն-1	3	5	8
	Համաշխարհային պատմություն-1	3	5	8
	Օտար լեզու-1	3	5	8
	Ռուսաց լեզու-1 (Ռուսաց լեզու, Ռուս գրականություն)	3	5	8
Ընդհանուր հանրակրթական բաղադրիչ				
Ընդհանուր հանրակրթական առարկաներ	Հայոց լեզու	2	2	2
	Հայ գրականություն	2	3	3
	Հայոց պատմություն	2	2	2
	Համաշխ. պատմություն	2	1	1
	Հասարակագիտություն	2	1.	1
			5	
	Օտար լեզու-2	2	2	2
	Ռուսաց լեզու-2	2	2	2
	Հայոց եկեղեցու պատմություն	1	1	-
	Մաթեմատիկա (Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր, Երկրաչափություն)	3	3	3
	Բնագիտական առարկա ²	2	1	1
	Բնագիտական առարկա ²	1	1	-
	Բնագիտական առարկա ²	1	-	-
	Բնագիտական առարկա ²	1	-	-
	Ինֆորմատիկա	1	1	-
	Ֆիզկուլտուրա	3	3	1
ՆՁՊ	1	1	1	
Դպրոցական բաղադրիչ				
Ընդամենը		34	34	34

Աղյուսակ 3

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԱՎԱԳ ԳՊՐՈՋԻ ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՀՈՍԷԻ X-XII ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԴՐԱՆ

Առարկայախումբ	Առարկա	Շաբաթական ժամերի քանակը		
		X	XI	XII
Հոսքային բաղադրիչ				
Խորացված ուսուցմամբ առարկաներ ¹	Մաթեմատիկա (Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր, Երկրաչափություն) -1	7	8	8
	Ֆիզիկա - 1	4	5	8
	Քիմիա - 1	4	5	8
	Կենսաբանություն -1	4	5	8
	Աշխարհագրություն -1	3	5	8
	Ռուսաց լեզու-1 (Ռուսաց լեզու, Ռուս գրականություն)	3	5	8
Օտար լեզու -1 ³	3	5	8	
Ընդհանուր հանրակրթական բաղադրիչ				
Ընդհանուր հանրակրթական առարկաներ	Հայոց լեզու	2	2	2
	Հայ գրականություն	2	2	2
	Հայոց պատմություն	2	2	2
	Հասարակագիտություն	2	1,5	1
	Մաթեմատիկա (Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր, Երկրաչափություն)	5	5	5
	Բնագիտական առարկա ²	2	1	1
	Բնագիտական առարկա ²	1	1	-
	Բնագիտական առարկա ²	1	1	-
	Բնագիտական առարկա ²	1	-	-
	Ինֆորմատիկա	1	2	1
	Օտար լեզու-2	2	2	2
	Ռուսաց լեզու	1	1	1
	Ֆիզկուլտուրա	3	3	1
	ՆՁՊ	1	1	1
Դպրոցական բաղադրիչ				
Ընդամենը		34	34	34

Աղյուսակ 4

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԱՎԱԳ ԳՊՐՈՋԻ ԱՐՇԵՏՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՀՈՍԷԻ X-XII ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԴՐԱՆ

Առարկայախումբ	Ուսումնական առարկաներ	Շաբաթական ժամերի քանակը		
		X	XI	XII
Հոսքային բաղադրիչ				
Մասնագիտական դասընթացներ (առարկաներ) ¹		9	13	15.5
Ընդհանուր հանրակրթական բաղադրիչ				
Ընդհանուր հանրակրթական առարկաներ	Հայոց լեզու	2	2	2
	Հայ գրականություն	2	2	2
	Հայոց պատմություն	2	2	2
	Օտար լեզու	2	2	2
	Ռուսաց լեզու	2	2	2
	Հասարակագիտություն	2	1	1
	Մաթեմատիկա (Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր, Երկրաչափություն)	3	3	3
	Բնագիտական առարկա ²	2	1	1
	Բնագիտական առարկա ²	1	1	-
	Բնագիտական առարկա ²	1	-	-
	Բնագիտական առարկա ²	1	-	-
	Ինֆորմատիկա և ՏՀՏ	1	1	1
	Ֆիզկուլտուրա	3	3	1.5
	ՆՁՊ	1	1	1
Դպրոցական բաղադրիչ				
Ընդամենը		34	34	34

2020-2021

Աղյուսակ 5

**ՈՒՍԵՐԵՆԻ ԽՈՐԱՎԱԾ ՈՒՍՈՒՄԱՄԲ
I - IX ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԴՆՆ**

Ուսումնական առարկաներ	Շաբաթական ժամերի քանակը								
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX
Մայրենի	7	8	8	8	7	6	-	-	-
Հայոց լեզու	-	-	-	-	-	-	3	2	2
Գրականություն	-	-	-	-	-	-	2	3	3
Ռուսաց լեզու	-	3	4	4	4	4	4	4	4
Օտար լեզու	-	-	2	2	2	2	2	2	2
Մաթեմատիկա	4	4	4	4	5	5	-	-	-
Երաժշտություն	2	1	1	1	1	0.5	0.5	-	-
Կերպարվեստ	2	1	1	1	1	0.5	0.5	-	-
Ես և շրջակա աշխարհը	-	1	1	2	-	-	-	-	-
Բնագիտություն	-	-	-	-	2	2	-	-	-
Աշխարհագրություն	-	-	-	-	-	1	1	2	-
Հայաստանի աշխարհագրություն	-	-	-	-	-	-	-	-	2
Համաշխարհային պատմություն	-	-	-	-	-	1	1	1	1
Հայոց պատմություն	-	-	-	-	-	1	1	1	1
Հայոց եկեղեցու պատմություն	-	-	-	-	1	1	1	1	1
Հայրենագիտություն	-	-	-	-	1	-	-	-	-
Հասարակագիտություն	-	-	-	-	-	-	-	1	1
Հանրահաշիվ	-	-	-	-	-	-	3	3	3
Երկրաչափություն	-	-	-	-	-	-	2	2	2
Ինֆորմատիկա	-	-	-	-	-	1	1	1	1
Ֆիզիկա	-	-	-	-	-	-	2	2	2
Քիմիա	-	-	-	-	-	-	1	2	2
Կենսաբանություն	-	-	-	-	-	-	2	2	2
Տեխնոլոգիա	2	2	1	1	1	1	2	-	-
ՆՁԴ	-	-	-	-	-	-	-	1	1
Ֆիզկուլտուրա	3	2	2	2	3	3	3	3	3
Շախմատ	-	2	2	2	-	-	-	-	-
Դպրոցական բաղադրիչ	-	-	-	1	1	1	1	1	1
Ընդամենը	20	24	26	28	29	31	34	35	35

Աղյուսակ 6

**ՈՒՍԵՐԵՆՈՎ ՈՒՍՈՒՄԱՄԲ ՄԻՋՆԱԿԱՐԳ
ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԳԴՐՈՋԻ (ԴԱՍԱՐԱՆԻ)
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԴՆՆ**

Ուսումնական առարկաներ	Շաբաթական ժամերի քանակը											
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Ռուսաց լեզու	4	8	6	8	6	3	3	3	2.5	3	3	3
Ռուս գրականություն	-	-	-	-	-	2	2	2	2	3	3	3
Մայրենի	3	3	5	4	6	5	-	-	-	-	-	-
Հայոց լեզու	-	-	-	-	-	-	3	2	2	2	2	2
Գրականություն	-	-	-	-	-	-	2	3	3	-	-	-
Հայ գրականություն	-	-	-	-	-	-	-	-	-	2	2	2
Օտար լեզու	-	-	2	2	2	2	2	2	2	2	2	2
Մաթեմատիկա	4	4	5	4	5	5	-	-	-	-	-	-
Հանրահաշիվ	-	-	-	-	-	-	3	3	3	2.5	2.5	2.5
Երկրաչափություն	-	-	-	-	-	-	2	2	2	1.5	1.5	1.5
Ես և շրջակա աշխարհը	-	1	1	2	-	-	-	-	-	-	-	-
Բնագիտություն	-	-	-	-	2	2	-	-	-	-	-	-
Երաժշտություն	2	1	1	1	1	0.5	0.5	-	-	-	-	-
Տեխնոլոգիա	2	1	1	1	1	1	2	-	-	-	-	-
Կերպարվեստ	2	1	1	1	1	0.5	0.5	-	-	-	-	-
Հայաստանի աշխարհ.	-	-	-	-	-	-	-	-	2	-	-	-
Աշխարհագրություն	-	-	-	-	-	1	1	2	-	1.5	1	1
Հայրենագիտություն	-	-	-	-	-	1	-	-	-	-	-	-
Հայոց պատմություն	-	-	-	-	-	1.5	1.5	1.5	1.5	2	2	2
Համաշխարհային պատմություն	-	-	-	-	-	1	1	1	1	1.5	1	1
Հայոց եկեղեցու պատմ.	-	-	-	-	1	1	1	1	1	-	-	-
Հասարակագիտություն	-	-	-	-	-	-	-	1	1	1	1.5	2
Ֆիզիկա	-	-	-	-	-	-	2	2	2	3	3	3
Քիմիա	-	-	-	-	-	-	1	2	2	2	2	1
Կենսաբանություն	-	-	-	-	-	-	2	2	2	2	2	2
Ինֆորմատիկա	-	-	-	-	-	1	1	1	1	1	1	1
ՆՁԴ	-	-	-	-	-	-	-	1	1	1	1	1
Ֆիզկուլտուրա	3	2	2	2	3	3	3	3	3	3	3	1.5
Շախմատ	-	2	2	2	-	-	-	-	-	-	-	-
Դպրոցական բաղադրիչ	-	1	-	1	-	1.5	0.5	0.5	1	-	0.5	2.5
Ընդամենը	20	24	26	28	29	31	34	35	35	34	34	34

Աղյուսակ 7

**ՏՆԱՅԻՆ ԵՎ ՀԻՎԱՆԴԱՆՈՋԱՅԻՆ ԴԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ
ԵՐԿԱՐԱՏԵՎ ԲՈՒԺՎՈՂ ԵՐԵՒՄՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԴՆՆ**

Ուսումնական առարկաներ	Շաբաթական ժամերի քանակը											
	Տարրական դպրոց				Միջին դպրոց				Ավագ դպրոց			
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Մայրենի	5	4.5	4.5	4.5	4.5	4	-	-	-	-	-	-
Հայոց լեզու և գրակ.	-	-	-	-	-	-	3.5	2.5	3	2.5	2	2
Ռուսաց լեզու	-	1	1	1	1	1	1	1	1	1	1	1
Օտար լեզու	-	-	1	1	1	1	1	1	1	1	1	1
Ես և շրջակա աշխարհը	-	0.5	0.5	0.5	-	-	-	-	-	-	-	-
Մաթեմատիկա	2	3	2	2	2	2	2	3	2.5	2.5	2	2
Հայոց պատմություն	-	-	-	-	-	0.5	1	0.5	0.5	0.5	0.5	0.5
Համաշխարհային պատմություն	-	-	-	-	-	0.5	0.5	0.5	0.5	0.5	0.5	0.5
Հասարակագիտություն	-	-	-	-	-	-	-	0.5	0.5	0.5	0.5	0.5
Ֆիզիկա	-	-	-	-	-	-	-	0.5	0.5	0.5	1	1
Քիմիա	-	-	-	-	-	-	-	0.5	0.5	0.5	0.5	0.5
Բնագիտություն	-	-	-	-	0.5	0.5	-	-	-	-	-	-
Կենսաբանություն	-	-	-	-	-	-	0.5	0.5	0.5	0.5	0.5	0.5
Աշխարհագրություն	-	-	-	-	-	-	0.5	0.5	0.5	0.5	0.5	0.5
Ընդամենը	7	9	9	9	9	10	11	11	11	11	10	10

Աղյուսակ 8

**ՏՆԱՅԻՆ ԵՎ ՀԻՎԱՆԴԱՆՈՋԱՅԻՆ ԴԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ
ԵՐԿԱՐԱՏԵՎ ԲՈՒԺՎՈՂ ԳՍԹԱՎՈՐ ԵՎ ԾԱՆՐ ՄՏԱՎՈՐ
ՀԵՏԱՄՆԱՌՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՉՈՂ ԵՐԵՒՄՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԴՆՆ**

Ուսումնական առարկաներ	Շաբաթական ժամերի քանակը								
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX
Լեզու և ընթերցանություն	3	3	3	3	3	3	3	3	3
Մաթեմատիկա	2	2	2	2	2	2	2	2	2
Ես և շրջակա աշխարհը	1	2	2	2	1	1	1	1	1
Տեխնոլոգիա (Չեռքի աշխատանք)	1	2	2	2	1	2	2	2	2
Բնագիտություն	-	-	-	-	1	1	1	1	1
Հայրենագիտություն	-	-	-	-	-	1	2	2	2
Ընդամենը	7	9	9	9	9	10	11	11	11

ՄԵՐ ԴԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՍՅՈՒՆԵՐԸ

Ազգային բանակ, եկեղեցի, դպրոց



ԴԱՏՎՈՎ ԿԵՐՈՒՆԱԿԵՆԸ ՀԱՅՐԵՆԻԻ ԵՎՐՅԱՆՆԵՐԻ ԳՈՐԾԸ

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՑՉԻՆ

ՀԱՎԱՍԱՐԱՄԵԾ ԵՎ ՀԱՎԱՍԱՐԱԿԱԶՄ ԲԱԶՄԱՆԿՅՈՒՆՆԵՐ

Մույն հոդվածի նպատակն է դարձնել համար հիմնովին բացահայտել բազմանկյունների հավասարամեծ և հավասարակազմ հասկացությունները:

9-րդ դասարանի երկրաչափության հարթաչափության դասընթացում հանդիպում են խնդիրներ՝ կապված պատկերների տրոհման և նրանց մասերի վերադասավորման հետ: Որպես օրենք, տրոհման խնդիրները չունեն լուծման ունիվերսալ մեթոդներ, այդ պատճառով հարցի շարադրման ժամանակ սովորողները կարող են լրիվությամբ ցուցադրել իրենց ինտուիցիան և ստեղծագործական մտածողությունը:



(1802-1860)

Պատկերների տրոհման խնդիրները հետաքրքրաշարժ են և մատչելի: Նրանց լուծման ընթացքում սովորողների մոտ ձևավորվում են պատկերացումներ բազմանկյունների այնպիսի կարևոր հատկությունների մասին, ինչպիսիք են հավասարամեծությունը և հավասարակազմությունը:

Բազմանկյան մակերեսի և հատկությունների սահմանումից հետևում է, որ կամայական երկու հավասարակազմ բազմանկյուններ հավասարամեծ են: Սովորողների առջև կարելի է դնել հիմնախնդիր՝ ճիշտ է, արդյոք, հակադարձ միտքը, այսինքն, որ ցանկացած երկու հավասարամեծ բազմանկյուններ հավասարակազմ


են: Այդ առաջադրությունը մաթեմատիկայի պատմությունում հայտնի է Բոյայի-Գերվինի թեորեմ անվամբ (նկարում Բոյային է):

Այն խնդիրները, որոնցում պահանջվում է տրոհել բազմանկյունը բազմանկյունների կամ ընդհակառակը, տվյալ բազմանկյուններից հավաքել նոր բազմանկյուն նշված հատկությամբ, կոչվում են բազմանկյան տրոհման խնդիրներ:

Եթե տրված բազմանկյունը կարելի է տրոհել բազմանկյունների և նրանցից կազմել (հավաքել) նոր բազմանկյուն, ապա նրանք կոչվում են հավասարակազմ բազմանկյուններ:

Հարթ բազմանկյունները, որոնք ունեն հավասար մակերեսներ, կոչվում են հավասարամեծ:

Խնդիր 1. Ապացուցել, որ սեղանը հավասարակազմ է այն զուգահեռագծին, որի




հիմքը հավասար է սեղանի միջին գծին, իսկ բարձրությունը՝ սեղանի բարձրությանը:

Լուծում: Լուծումը հետևում է նկար 1-ից, որից երևում է, որ զուգահեռագիծը և սեղանը կազմված են մի քառանկյունուց և մի եռանկյունուց:

Խնդիր 1. Ապացուցել, որ հավասարամեծ զուգահեռագիծը և ուղղանկյունը հավասարակազմ են:


Լուծում: Լուծումը հետևում է նկ. 2-ից:

Խնդիր 2. Կառուցել տրված սեղանին հավասարակազմ եռանկյուն:




Լուծում: Լուծումը պատկերված է նկ. 3-ում:

Խնդիր 3. Տրված է եռանկյուն, այն տրոհել և ստանալ զուգահեռագիծ:



Լուծում: Կտրում ենք եռանկյան միջին գծով և ստացված եռանկյունը կցագրում սեղանին աջից: Ինքնուրույն ապացուցել, որ ստացվում է զուգահեռագիծ, նկ. 4:



Նկ. 5

Խնդիր 4. Ապացուցել, որ հավասարամեծ եռանկյունը և ուղղանկյունը հավասարակազմ են:


Լուծում: Լուծումը ակնհայտ է նկ. 5-ից:

Խնդիր 5. Տրված է a, b կողմերով ուղղանկյուն: Կառուցել նրան հավասարամեծ քառանկյունի և ցուցադրել նրանց հավասարակազմությունը:

Լուծում: Ուղղանկյան մակերեսը հավասար է a·b-ի: Եթե նրան հավասարամեծ քառանկյուն կողմը նշանակենք x-ով, ապա կգրենք՝ $x = \sqrt{ab}$:

Ուրեմն, պետք է կառուցենք a, b հատվածների միջին երկրաչափականը:


Այն ներկայացված է նկ. 6-ի ա), բ) կետերում: Ուղղանկյանը հավասարամեծ քառանկյուն կառուցման քայլերը ցուցադրված են նկ. 6-ի գ), դ) և ե) կետերում:



Նկ. 6

Խնդիր 6. Ցուցադրել Պյութագորասի թեորեմի գծագրի հավասարակազմությունը, նկ. 7:


Լուծում: Գծագրի կենտրոնում ուղղանկյուն եռանկյուն է, a, b էջերով և c




Նկ. 7

ներքնաձիգով: Թեորեմը պնդում է, որ էջերի վրա կառուցված քառանկյունների գումարը հավասար է ներքնաձիգի վրա կառուցված քառանկյուն մակերեսին: Դրանում դժվար չէ համոզվել դիտելով նկ. 7-ը:

Խնդիր 7. Տրված է ուղղանկյուն, որի մի կողմը երկու անգամ մեծ է մյուսից: Այն տրոհել մասերի այնպես, որ հնարավոր լինի մասերից կազմել ուղղանկյուն եռանկյունի:




Նկ. 6



Նկ. 7

Լուծում: Դա կարելի է իրականացնել 2 եղանակով, մեկը պատկերված է նկ. 6-ում, իսկ մյուսը՝ նկ. 7-ում: Տրոհման խնդիրները նպատակահարմար է դիտարկել քառանկյունի վանդակավոր թղթի վրա, որը և իրականացված է նկ. 7-ում:

Խնդիր 8. Պատկերել հավասարամեծ Քրիստոնեական խաչի և քառանկյուն հավասարակազմ լինելը:



Նկ. 11

Լուծում: Տրված են A և B բազմանկյունները, նկ. 11, որոնք հավասարամեծ են: Ապացուցել, որ նրանք հավասարակազմ են: Դրա համար բավական է 4 ուղղանկյուն եռանկյունները պտտել փոքր էջի զագաթի շուրջ ուղիղ անկյան տակ:

Ակնհայտ է, որ պատկերի պտույտի ժամանակ այն ձևավորվում է ինքն իրեն հավասար պատկերի:

ԱՆՏԻՊ ԷՋԵՐ

ՀՈՎԶԱՆՆԵՄ ԵՐԱԶԻ ՄԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ԵՆՈՐԶ

Ողբ Արցախի

(Նմանակում Գ. Շիրազի «Տաղ նորափետուր Գայաստանին» բանաստեղծության՝ ըստ Ս. Մինասյանի)

Դեռ էն գլխից դու մարդասեր՝
Երագներ են դարեր հյուսել,
Վերջիդ մեջ էլ երգ են ասել,
Արցախ:
Արեգավառ այս աշխարհում
Չափից շատ են այլոց սիրում,
Բայց դեռ լաց կա քո աչքերում,
Արցախ:
Հարավից հյուսիս երագ դարձել՝
Արևելքից արևմուտքն էլ չի մնացել,-
Սևանն ինձ հետ այս է լացել,
Արցախ:
Խիղճդ պատրույզն է քո խելքի՝
Լույս կանթեղն են Արևելքի,
Լուսի՛ր (լուսավորել - ՍՍ) լեռն էլ քո վերելքի,
Արցախ:
Ով կռվել է՝ դու են խոցվել՝
Չարը բացվել, դու են գոցվել,
Նոր են հագվիլ դու ամրոցվել,
Արցախ:
Մի հին մուկ քա թո լույսերում՝
Չափից դուրս են այլոց սիրում,
Ինչո՞ւ դու քեզ թուր չես սրում,
Արցախ:
Ձեռիդ՝ քարն էլ բերք է տալիս,
Դու աշխարհին երգ են տալիս,
Աշխարհը քեզ վերք է տալիս,
Արցախ:
Ասին՝ թաղվեց եղեռնահար՝
Սփյուռք դառավ անշիրմաքար,
Բայց դու նորից աշխարհ կգաս,
Արցախ:
Հին ոսոխը հողդ խելել՝
Նոր սև ծյուն է գլխիդ բերել,
Շատ սևի են դու համբերել,
Արցախ:
Արագածված կանքդ վկա՝
Արարատն էլ այս կողմ կգա,
Գլխիդ կառնես թագդ ոսկյա,
Արցախ:
Վերջն աշխարհը խոր կամաշի,
Որ երկիրդ չի ճանաչում,
Երգդ հավերժ պիտի հնչի,
Արցախ...

Հովհ. Շիրազ

ԱՅԵՂ ԴԱՏԱՍՏԱՆ

Յոթը շներ ունեն (ավա՛ղ մեր հին տներին...)
Ամեն մի օր են ծեծում են իմ այդ շներին,
Մի շանն անունն ալփաալան է, մեկինը՝ ջեմալ,
Մի շանն անունը թալեաթ է, մեկինը՝ էնվեր,
Մի շանն անունն աթաթուրք է, մեկինը՝ շովեր,
Մի շանն անունը սուլթան է, մյուսինը՝ ցար,
Միշտ ծեծում են իմ շներին խղճով իմ արդար,
Երբ ծեծելը մոռանում են, իմ սիրտն է ցավում,
Երբ ծեծում են, թվում է, թե մեղքերն են քավում,
Երբ ծեծում են քացով, քարով, երբ ոռնում են խեղճ՝
Նոր է խիղճս հանգստանում, ժպտում սրտիս մեջ,
Հաց են տալիս, որ չսատկեն, որ ծեծեն անդուլ,
.....
Քանգի նրանք էին երեկ մեր տունը քանդում,
Ծով սրտիցս հագիվ թողին մի բուռն արնաքամ՝
Հազար ու մի շուն կա այսպես, ո՞ր մեկին հաց տամ...

1964թ., Երևան, ծնունդ

2018թ. լույս է տեսել Գ. Շիրազի անտիպ գործերի 3-րդ գիրքը՝ «Անտիպ էջեր» անվանք, որն իրացվել է Սամվել Մուրադյանի և Վանանդ Շիրազի ջանքերով: Անտիպ այդ գործերը թվայնացվել են Գյումրիի (Կումայրի) շիրազյան տուն-թանգարանի աշխատակիցների կողմից՝ տնօրեն Արա Պապանյանի ղեկավարությամբ (թվայնացման շնորհիվ ձեռագիր այդ գործերը թույլատրվել են գործածության): Ահա գեղագիտական մարզարիտների հավաքածու այդ գրքի էջ 119-ում տեղադրված մի անվերնագիր քերթված, որի ներքևում նշված է 1937 թիվը, որը շեշտում է խորհրդային երկրի ամենասարսա-

փագրու ժամանակահատվածը.
Սուրբ տաճար ես դու, ինչպե՞ս հավատամ,
Թե դու էլ այժմ թշնամի ունես,-
Երբ հազարների հույսն են անթառամ,
Երբ մոր գրկի պես իմ հայոց բույնն են:
Ինչպե՞ս կարող է աստղը երկնքի՝
Լույս տվող աստղը ոսոխ ունենալ,
Չէ՞ որ քեզ նման մայր հայրենիքի
Կույր ճրագն էլ փարոս է դարձյալ:
Ես չեմ հավատում չար շշուկներին,
ժանտ շշուկներին ես չեմ հավատում,
Գաղտնի եղեռն է իմ շուրջը լռին,
Աղավնաբույներս ինչո՞ւ են քանդում:
Մի՞թե մեղք ունի օրոցքը մանկան՝
Աքտրոյալներս օրոցքներ էին՝
Օրոցքում ներկան, անցյալն, ապագան,-
Աստված իմ, փրկիր հայ գալիքներին...

1937թ.

Այս բանաստեղծությունն ունի մեծարումներ՝ Սուրբ տաճար ես դու (մատնանշվում է հիշվող մարդու ասիականությունն ու մաքրությունը), հազարների հույսն են անթառամ, Լույս տվող աստղ, փարոս, որոնք ուղղված են մեկին, ում ով լինելը միանգամից չի հասկացվում: Ամբողջ գործը բանաստեղծական ոգրում է, ուր զգացվում է ընդհանրական մեծության կորուստը: Այդ հարցով հետաքրքրվելով և երկրորդ անգամ ընթերցելով հիշյալ գործը՝ հայ ժողովրդի պատմությանն ու գրականությանը լավ ծանոթը կռահում է, թե ում են վերաբերում հոգեբանական այս արտացոլանքները: Գ. Շիրազի ներաշխարհի ապրումները փոխանցվել են բանաստեղծական լեզվին: «Կյանքի ու բանաստեղծական աշխարհի միջին տարածքը բանաստեղծությունն է» (Գ. Էդոյան): Գր. Թամրազյանը դա որակել է «միջնաշխարհով» (հոգևոր գեղագիտական խոսքի մեծ արժույթը - ՍՍ): Հասմիկ Հակոբյանը, դա հաստատելով, «միջնաշխարհային հանդիպում» է որակել: Շիրազյան միջնաշխարհում հենց հուշողական տվյալները համարվել են խորքում: Հոգեբանական անդրադարձումների գեղագիտական կառուցվածքն անկասկած XIX դարի 30-ականներին ասիական տույժ կրած մեծություններն էին: Թղթին հանձնված այս մտորումները՝ միջնաշխարհը, արվեստի ռահվիրան է: Համոզված ենք, որ խոսքը վերաբերում է տաղանդաշատ հսկա Եղիշե Չարենցին (Սողոմոնյան Եղիշե Աբգարի): Հանրահայտ ստեղծագործող Գ. Շիրազը բանաստեղծական աշխարհի նոր մտած տարիքում՝ իր ծննդավայրում կազմակերպված գրական երեկոյի ժամանակ, լսել էր Չարենցի խորախորհուրդ խոսքը գեղարվեստական գրականության՝ «միջնաշխարհի» շուրջ: Գ. Շիրազի մտածողությունում այդ անձնավորությունը հրաշք էր թվացել, ու ծանոթացել էր նրա բանաստեղծական նվաճումներից եղած փշրանքներին (դաժանորեն ոչնչացվել էին չարենցյան նվաճումները): Սկսնակ բանաստեղծը զգացել է չարենցյան գեղագիտական խոսքի թարմության արժույթը: Եվ ասի տուժած արվեստագետին նվիրված՝ մեր քննարկելիք անվերնագիր ու կերպարի անվան ոչ կիրառությամբ բանաստեղծությունը հուշողական շատ կողմեր ունի: Այն մեծ մասամբ շատ է նրբացված ու խոր հուզում է ընթերցողին: Երբեմն պոռթկում բողոքը, ընդդիմությունը շաղախված են հոգեբանական զրույցին (սկզբնական շրջանի շիրազյան գեղագիտական խոսքի պարզամիտ կառուցվածքն այստեղ հազվագյուտ է. Երբ հազարների հույսն են անթառամ): Առաջադեմն ու առաջադիմականը միշտ տուժել ու տուժում են ցածր մակարդակի իշխանությունում: Ազնիվ, հայաշունչ մտածող գեղագետին ևս այդ էր ու է վիճակված: Նրանց միշտ էլ հալածել ու հալածում են: Երիտասարդ ստեղծագործողների նկատմամբ գրական ուսուցողական հանդիպումներում մեծությունների խոսքի առաջնորդի ուժը ճիշտ հասկացել ու գնահատել էր պարմանի Շիրազը, տարբերակել էր դրանք թափն ու կշիռը: Այդ ժամանակներում հալածված մեծություններից դժմի վերաբերմունքի արժանացած Չարենցն էր (պակաս չէր տուժել նաև Գ. Շիրազը, բայց իսահակյանական հովանավորությունը նրան ազատել էր ավելորդ տույժերից): Գ. Շիրազը իր գեղագիտական խոսքում յուր միջնաշխարհում, բացահայտ արտահայտել է խորհրդային երկրի մարդկանց կողմից գործածված ոչ մարդկային սխալները: Ընկերների կրած հալածանքները, նրանց վերագրված հերյուրանքները բանաստեղծական ընդհանրությամբ երբեմն վերագրել է իրեն: Մասիսաչափ սիրտ ունեցող ու մասիսապաշտ բանաստեղծն այս տքնանքով մեծարել է հայ անմահ արվեստագետին՝ մշտաինչեղ Չարենցին, փնտրել նրա դեմ էլած ստահակներին (իր ժամանակին մեծություններին ստահող փնտրողները Շիրազ արվեստագետի կողմից բացահայտորեն ու համարձակ քննադատվել են, նա դրանք

անվանել է՝ թշնամի, ոսոխ, նույն գրքի մի այլ գործում՝ էջ 218, սև հարյուրյակ է որակել): Ազատամիտ, հայրենասեր Եղիշե Չարենցի դեմ հնչած չարամիտ խոսքերը, գործունեությունները Գ. Շիրազը որակել էր չար, ժանտ շշուկներ, գաղտնի եղեռն (տուժել էին շատ գործիչներ, որոնց բողոքներն ու շարժումներն չէին արժանացել, հալածանքները չէին կասեցվել. երբեմն անուժ ու արհամարհված անձանց ընդդիմությունն արտահայտվել է ոգելից խմիչքի ընդունմամբ կամ հաշիշով, որով շրջապատն առավել է հավատացել նրանց մասին ստեղծված սին հերյուրանքներին): Բանաստեղծ Գ. Շիրազի հոգու ողբը խոր էր, ցավը՝ անբուժելի: Հայը հայի դեմ կատարյալ աստուճա էր դարձել, գաղտնի գործունեությամբ զբաղվել՝ լրտեսական հանիրավի աշխատանքներ գործադրել (հիմա էլ նույն տիպի մարդիկ ու գործունեություն կան, բայց՝ սահմանափակ, իսկ տույժերը՝ հազվագյուտ): Ահա հոգեկան տանջանքներ կրած Գ. Շիրազը՝ մեր իրականության ողբերգակը, գեղագիտական ոճով դրանց վերաբերյալ սրտամրմունջ և ըմբոստ բանաստեղծություն է ներկայացրել (իր ուժը պատածը), ցույց է տվել իր անմիջականությունն ու եղած լավն ու վատը ճիշտ գնահատելու կարողությունը: Ըմբոստացումը քերթվածքում մեղմ է, բառերը, բառակապակցություններն այլաբերված՝ շրջապատ, բայց միևնույն է, ՊԱԿ-ի (ԿԳԵ)՝ աշխատողների սրտես աչքից ոչինչ չի վրիպել: Կասկածի տակ առնված շիրազյան գործերը քննվել էին, նոր թույլատրվել տպագրության, ուստի այս բանաստեղծությունը իր ժամանակին զրկվել է տպագրվելու հնարավորությունից: Դա կառավարական վարչության ոչ հաճո վերաբերմունքն է իրենց թերությունները նկատած ու հասարակությանը ներկայացրած արվեստագետի նկատմամբ: Ե. Չարենցի նման անձի կորուստը շատ մեծ ցավ էր պատճառել հայ ժողովրդին, հայ բանավեստին: Այսպիսի երևույթները նախորդ դարի 30-ականներին սովորական էին: Դրանք շատ են արձագանքվել նրբակերտ բողոք-գեղագիտությամբ, ոճավորվել են ցավով առնեցուն այլաբերություններով, կորուստների արժևորման մորմոքներով: Ընդվզման դիմածներն անգթորեն բռնադատվել ու բռնադատվում են առ այսօր:

Մտավորականների վերաբերյալ եղած հերյուրանքը Գ. Շիրազ գեղագետին սկզբից զարմանք էր պատճառել, հետո գեղագիտական «միջնաշխարհով» կիսվելուն մղել: Լուրերի արձագանքը հեղինակային միջնաշխարհով արտահայտված, ամբողջությամբ հասարակությանը չի մատուցվել, անտիպ են մնացել: Շիրազյան այդ տիպի գործերը շատ են հնչել («Հայոց դանթեականը», «Անի», «Թնդրակեցիները» մեծածավալ գործերն ու բազմաթիվ բանաստեղծություններ, որոնց մեծ մասն արդեն նոր հրատարակվել է): Անհավատալի թվացող մեղքերի թողությունն Աստծուն տալով, հայության պապական անորոշությամբ պարուրելով՝ մեծամուն Շիրազն այս բանաստեղծությամբ արտասովոր ու մեղմ ձևերով հայ ժողովրդի ցավալի երևույթները կապակցել է լեզվական համարձակ գեղագիտական հնարավորություններին: Դրանք իր ժամանակի համար նաև գեղագիտական ցավոտ լեզվական միջոցներով գյուտերի արտացոլանք ունեին: Կարծես բառերն «ազատ վիճակ» են ստացել (Ա. Թոփչյան): Դրանց խտացումները Գ. Շիրազի միջնաշխարհում սեղմ չեն: Երբեմն շրջասույթատիպ ընդարձակ ձևակերպումը կարծես տողային չափերի է հասել, մերվել ավանդական չափածոյի կառույցին: Ահա քննարկվող բանաստեղծության լեզվաոճական հնարանքներ արժույթը, որը մեզ մղում է հատուկ ուշադրության, թղթին հանձնելու տքնանքին:

Այս չորս քառատողանոց բանաստեղծությունը ընդգրկում է նաև բավականին շրջասույթություններ՝ այլաբերված բառակապակցություններ, նախադասություններ, որոնց մի մասը դարձվածների ստեղծման հիմք էր ու հիմա էլ կլինի: Դրանք գործածվել են շիրազյան մտքերի խտացումից, «միջնաշխարհով» արտահայտվելու հնարավորությունից ու բառակապակցությանը նոր՝ անսպասելի իմաստային զուգորդումից, այլաբերումից: Ահա դրանց շարքը, ուր սովորականը հազվագյուտ է՝ սուրբ տաճար (ազնիվ մարդ), հայոց բույն (գեղագիտական արվեստ ձևավորող, այդ աշխատանքի հիմքը, ուղղություն տվողը), ոսոխ չունեցող (ազնիվ մարդ), մայր հայրենիք (Հայաստան), փարոս (զարգացմանը նպաստող), գաղտնի եղեռն (30-ականների մասսայական ձերբակալություններն ու Սիբիր քշելը, սպանելը), աղավնաբույներս քանդել (ընտանիքների անկում), աքտրոյալները օրոցքներ (անմեղներ): Սրանք այս բանաստեղծության մարզարիտներն են, որոնք նուրբ փայլով գեղագիտական գրավչություն են հաղորդում այս խորիմաստ գործին: Դրանք հեղինակային ներաշխարհի փոխանցումներ են բանաստեղծական «միջնաշխարհի» լեզվին:

Սիլվա ՄԻՆԱՍՅԱՆ
Բ. Գ. Թ., դոցենտ

ԳՐԱԿԱՆ

ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԴԱՇՏ



Սեպտեմբերի 16-ին Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» պետհավատարմագրված համալսարանի և Արցախի գրողների միության նախաձեռնությամբ բերդաքաղաք Շուշիում տեղի ունեցավ երիտասարդ բանաստեղծ Սերգեյ Սաֆարյանի (Նեմրոթ) «Ինքնության դաշտ» առաջին գրքի շնորհանդեսը:

Միջոցառմանը բացման խոսքով հանդես եկավ ԱԳՄ նախագահ, «Գրիգոր Նարեկացի» համալսարանի ղեկավար, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վարդան Գալստյանը: «Կարողալով Սերգեյ Սաֆարյանի բանաստեղծությունները՝ անմիջապես գրողի մտածողության քարտուստները՝ Զգում ես, որ բառն ավելին լինելու ճիգեր չի գործադրում, պարզ, գրեթե մանկական հայացք է բերում իր հետ, որը չի կարող իր խորքով չտրամադրել: Սա իմ առաջին տպավորությունն է, որ տարիներ առաջ ստացել եմ դեռևս նրա աշակերտական ծոցատետրից: Իսկ այսօր նկատելի է, որ «հետք չի քշում» նրա խոսքը, քանզի ուրիշի հետքի վրա բառը ինքնառաջնացնում է: Նա գրում է այն, ինչ զգում է տեսնում է. սա մեծ արվեստ է՝ պոեզիայի բնագավառում: Սերգեյի բնավորության գծերը հստակ տեսանելի են նրա տողերի մեջ՝ առանց կեցվածքային ճոճում խաղը ու ցուցքի»,- մասնավորապես ասել է Վ. Գալստյանը և շնորհավորել երիտասարդ գրողին գրքի լույսընծայման առթիվ:

Այս խոսքը տրվեց գրքի խմբագիր, Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի ՀԼԳ ամբիոնի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու Ժաննա Բեգլարյանին: Նա ընդգծեց. «Իր գեղարվեստական մտածողության ինքնատիպությամբ հեղինակն իրերն ու երևույթներն իմաստավորում է ազատ ընկալմամբ և լեզվական իրողությունների դրսևորման քարտուստներով՝ իր ապրած դրամատիկ ժամանակի դիմապատկերը բացահայտելով չկրկնվող նրբերանգներով»:

Ելույթ ունեցան նաև Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի Որակի ապահովման կենտրոնի տնօրեն, բանասիրական գիտությունների թեկնածու Անայա Գրիգորյանը, «Ազատ Արցախ» թերթի խմբագիր, գրող Նորել Գասպարյանը, Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի ՀԼԳ ամբիոնի դասախոս Նանար Սիմոնյանը, քաղաքագետ, Ս. Սաֆարյանի մանկության ընկեր ժիրայր Ազիզյանը: Միջոցառումը համեմվեց երգիչ, երգահան Ռաշիդ Բաբայանի անգուզական երաժշտական կատարումներով: Սերգեյ Սաֆարյանի բանաստեղծություններից ասուներեց ուսանողուհի Միլենա Ղուլյանը:

Վարդան Գալստյանը «Գրիգոր Նարեկացի» համալսարանի և Արցախի գրողների միության «Նարեկացի» մեղալ և շնորհակալագիր հանձնեց հայ ժողովրդի ֆրանսիացի բարեկամ, «Հայաստան համահայկական հիմնադրամ»-ի Արցախի մասնաճյուղի ներկայացուցիչ, գրքի մեկենաս Միշել Տանկերզին: Գինեծոնից հետո Գրողների միության նախագահ Վարդան Գալստյանը Գրիգոր Նարեկացու հարթաքանդակ-հուշանվեր հանձնեց Սերգեյ Սաֆարյանին: Վերջում խոսքը տրվեց գրքի հեղինակ Սերգեյ Սաֆարյանին, որն իր շնորհակալությունը հայտնեց բոլոր նրանց, ովքեր ջանք ու եռանդ չեն խնայել մտահղացումն իրականություն դարձնելու համար:

Սերգեյ Սաֆարյանի բանաստեղծական աշխարհն առանձնանում է բանաձևային մտածողությամբ, փիլիսոփայական խորքով և ասելիքի թարմությամբ: Նրա «Ինքնության դաշտ»-ում գեներտիկ հիշողության զարկերակն արթուն է, այն վերաիմաստավորվում ու ծավալվում է հեղինակի բանաստեղծության մեջ:

Բանաստեղծի համար հայրենիքը սկիզբ է առնում սահմանից: Ինչպես յուրաքանչյուր արցախցի, Սերգեյ Սաֆարյանը հոգնել է ոչ պատերազմ-ոչ խաղաղություն կարգավիճակից, նա որսում է հողի անզգուշ շնչառությունը, «նրա ծանր հոգոցը»: Սերգեյ Սաֆարյանը հայրենիքի զինվոր է, որը երազում է հսկել օջախ-բնօրրանի խաղաղ առավոտները: Երկիրը բանաստեղծի համար լոկ հող ու քար չէ: Հայրենիքի ամենամեծ հարստությունը մարդն է՝ ուսուցիչն ու շինարարը, մանուկն ու ծերունին: Հայրենիքը գերազույն սեր է Սերգեյ

Սաֆարյանի համար. *Դու ամենուր ես՝ արևի վրա, լուսնի փեշերին, իմ ափերի մեջ: Երկիր, բարձր ես, բարձր ես, բարձր ես, բարձր ես, այնքան բարձր ես, որ Քեզ հանդիպում եմ ամենաբարձր այն հողաթմբին, ուր ինձ համար իմաստազրկվում են բոլոր բարձունքները: Կեղծ հայրենասերների շահարկումներից, աթոռակալներից ու ճոռոմաբանություններից հոգնել է բանաստեղծը: Նրա համար*

նվիրյալի, ազնվի ու պայքարող հայի տեսակ է քաղաքական գործիչ, Թուրքիայի մեջլիսի պատգամավոր Կարո Փայլանը. *Չլռելը նույն լռությունն է, թե նրա մեջ ծայն չկա. ...«Ձահակիրները» որքան շատանում, այնքան նոսրանում են հարթանակները: Բոլորը անխնա խնայում են լռությանը: Չգիտեմ, բայց այս վերջին ժամանակներս չլռողների մեջ անվերջ լսել եմ ուզում*

միայն Կարո Փայլանին: Երանի բոլորս այդպես չլռեինք: Բանաստեղծը (Նեմրոթը) հավատում է իր հայրենիքի լուսավոր ապագային, հավատում է, որ հայոց երկրում կծնվեն Սողոմոն Թեղևերյանի, Հրանտ Դինքի արժանի հետնորդներ, վրեժի ծովը կալեկոծի նաև գալիք սերունդների սրտերը, և հայոց երկնագույնը դեռ կփողփողա Մասիս լեռան գագաթին: Պայքարը շարունակվում է: Կորուսյալ հայրենիքը սպասում է մեզ: Սերգեյ Սաֆարյանը կատարյալ երջանկությունից փայլում է և՛ մոր, և՛ մայր բնության գրկում: Մայրական գիրկը, նրանից ճառագող քնքշանքն ու սահմաններ չճանաչող սերն ապահովություն ու վստահություն են ներշնչում գրողին: Եթե խնայեմք ու պաշտեմք մայրերին, «ոչ ոք աշխարհում անարև ապրելու առիթ չէր ունենա», - ընդհանրացնում է բանաստեղծը:

Անցյալի հուշերը հանգիստ չեն տալիս Սերգեյ Սաֆարյանին, նա երազում է մտքի արագությանը հաղթահարել աշխարհագրական ամեն խոչընդոտ և ծաղիկների ու երգերի թերով հայտնվել սիրած եսկի գրկում, սիրած եսկ, որն անթերի է, որին չսիրելն անհնար է, մոռանալն՝ անկարելի: «Ծորում եմ ինձ, և հասցես ուղղում քեզ», «Դու անհայտ ճանապարհով նորից հայտնվել ես իմ ճանապարհին», «Ի՞նչ գույն ներկեմ քո գույնը» բանաստեղծություններն անդալվածան սիրող, լռության դաշտում հասկացված լինելու բանաձևումներ են: Անձրևաթաց բույր ունի սիրելին, այդ բույրից անզամ մութն է լույսնալույսով ծաղկում, օրը գունավորվում է սիրելիի շուրթերի հետքերով: Առանց սիրելիի օրն անիմաստ է, մութը՝ անշուք, հետքերը՝ գունատ: Միակ միսթարությունը լուսնի լույսն է, քանզի նրա վրա ուրվագծվում են սիրելիի աչքերը. Ծորակն են համբերությունս ու, թղթե ինքնաթիռի վերածելով (մանկություն է), բաց թողել անսահմանություն: Եթե հանդիպես նրան, անտարբեր չանցնես. ուղևորը, որին փնտրում է նա, Դու ես:

Նանար ՍԻՄՈՆՅԱՆ

ԵՐԳԻ ՈՒԾԸ

Գուսան Հայկազունը միջոցառումներից մեկի ժամանակ պատմեց իր երգի հետ կապված այս պատմությունը, և ներկայացրեց մի կին, հուզմունքը զսպելով, ոտքի կանգնել ու ասել է, որ ինքն այդ երեխաներից մեկն է:

Արցախյան առաջին պատերազմի ժամանակ Շահումյանի շրջանի գործը նահանջի հրաման է ստանում:

Ձինվորներից մեկը մոտենում է հրամանատարին եւ ասում.

- Հրամանատար, անտառում երեխայի լացի ծայն ենք լսել, եւ մեկն ասաց. «Բալա, տ'ուս արա»:

Հրամանատարը պատասխանում է.

- Մենք դեռ ժամանակ ունենք, եկեք երեխային գտնենք, կյանքը կփրկենք, եւ դա կլինի մեր հաղթանակը:

Տղերքը ծայնում են. «Մենք հայեր ենք, դուրս եկեք, մենք հայեր ենք, եկեք»: Բայց ոչ ոք դուրս չի գալիս, քանի որ թուրքերն էլ կարող էին հանգիստ այդ արտահայտությունները գոռալ:

Հրամանատարն արտասվելով ասաց, որ պիտի անեն այնպիսի բան, որը թուրքը չի կարող անել, եւ սկսեցին երգել, որից հետո անտառից դուրս է գալիս մի ծեր մարդ 43 երեխաների հետ միասին: Նա մի հրացանով փրկել էր երեխաներին եւ թաքցրել անտառում:

Տղերքն ուղղակի «Գետաշեն» երգն էին երգել...

Համասանցից

Պատերազմը ցավ ու վիշտ բերելուց զատ՝ նաև փոխել է մեր կյանքի բնակարանը: Անցյալն ու ներկան հիմա մեզ նույն դեմքով են ներկայանում, իսկ ապագան մշուշոտ է: Ո՛ր է տանում ճամփան, որ ուրիշներն են, ցավոք, բացել մեզ համար: Հիմա հարցերն ավելի շատ են, քան պատասխանները, որոնք ոչ թե պիտի ուրիշից ստանանք, այլ հենց ինքններս գտնենք: Գտնենք ու քննարկենք, վերլուծենք ու համարդ պետության բոլոր մանկավարժների վստահելի գրուցակիցը: Համախմբվեք կրկին մեր սիրելի թերթի շուրջ: Տարեկան բաժանորդագինը դարձյալ նույնն է՝ 3000 դրամ: Սպասում ենք բոլորիդ նորանոր հանդիպումների հույսով:

ՓՈՔՐԻԿ ԲԱՅՆԵՐԻ ԱՐՎԵՍԱՆ

...Աստված իմ, ես չեմ խնդրում հրաշքեր և տեսիլքներ, ես խնդրում եմ ուժ ամեն օրվա համար: **Սովորեցրու ինձ փոքրիկ քայլերի արվեստը:** Դարձրու ինձ հետևողական և պատրաստական, որպեսզի օրվա միապաղաղության մեջ ճիշտ ժամանակին կանգ առնեմ բացահայտումների և փորձի ճամփաբաժանին: **Սովորեցրու ինձ ճիշտ տնօրինել իմ կյանքի ժամանակը:** Նվիրիր ինձ ներքին ծայն, որպեսզի առանձնացնեմ այն, ինչ պետք է ամեն առաջին և ապա՝ երկրորդ հերթին: Խնդրում եմ քեզից չափավորություն և զսպվածություն, որպեսզի իմ կյանքի ընթացքում չթռչեմ և չտողամ, այլ կարողանամ ծրագրել իմ օրը խելամտորեն, կարողանամ տեսնել բարձունքներն ու հեռուները: **Օգնիր ինձ հասկանալ, որ երազանքները**

չեն կարող օգնել. ոչ անցյալի և ոչ էլ ապագայի մասին երազանքները: Օգնիր ինձ լինել այստեղ և հիմա, ընդունել այս թուփն որպես ամենակարևորն ու զլխավորը: **Պահպանիր ինձ այն միամիտ հավատից, որ այս կյանքում ամեն ինչ պետք է հարթ լինի:** Տուր ինձ հստակ գիտակցություն, որ դժվարությունները, ծախողումները, պարտությունները և անհաջողությունները միայն կյանքի բնական բաղադրիչ մասերն են, որոնց շնորհիվ մենք աճում ենք ու հասունանում: **Հիշեցրու ինձ, որ հաճախ սիրտը վիճում է բանականության հետ:** Անհրաժեշտ պահին ինչ-որ մեկին ուղարկիր ինձ մոտ, որը քաջություն կունենա ասել ինձ ճշմարտությունը, բայց ասել այն սիրելով:

Ես գիտեմ, որ շատ խնդիրներ որոշվում են, երբ ոչինչ չես ձեռնարկում: Այս դեպքում տուր ինձ համբերություն: Դու գիտես, թե մենք ինչքան շատ ենք զգում ընկերության կարիք: Թույլ տուր արժանի լինել ճակատագրի ամենահարաշալի ու քնքուշ այդ նվերին: **Դարձրու ինձ մարդ՝ ունակ թակելու այն դռները, որոնք ամենաներքևում են:** Պահպանիր ինձ այն վախից, որ ես կարող եմ ինչ-որ բան բաց թողնել իմ կյանքում: **Տուր ինձ ոչ թե այն, ինչ ես խնդրում եմ ինձ համար, այլ այն, ինչն իսկապես անհրաժեշտ է ինձ:** Եվ խնդրում եմ նորից՝ սովորեցրու ինձ փոքրիկ քայլերի արվեստը:

Անտուան դը Սենթ Էքզյուպերի

Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ | Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99, E-mail: gorctert@mail.ru: www.lusarar.info | Մեքերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում: | Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլուս» ՍՊԸ-ում: Ծավալը՝ տպագրական 3 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 30.12.2020թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: